№ 190 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2

1906

ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2 № 190

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օր'երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ռուսաց Կայսերական Երաժշտական Ընկերութեան
ԵՐԱԺՇՏԱԳԷՏ
ԴԱՇՆԱԿԱՀԱՐ
ՅՈՎՍԷՓ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ
Ելիզաւետինսկայա փողոց, 40.
Ընդունելութիւնը և պարապմունքները ամբողջ տարի
Վճարը՝ իր մօտ 9 ր. ամսական, իսկ տներում հրաւիրվելով 9 ր. ժամը:
(ա. օր.) 7—8
(աո.)

Յուլիսի 1-ից
ԲԱՑՎԱԾ Է
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ
„ՊՕՂՈՍԵԱՆՆԵՐԻ“
Արմեանսկի-բազար տուն Զուժուխաձէի 2-րդ յարկ
Վաճառվում են ամեն տեսակ մանուֆակտուրային ապրանքներ մեծ քանակութեամբ և Թոփով շատ մատչելի գներով:
աո. 2. 2. 5—20

ԳԻՄՆԱԶԻՍՏԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԳԻՇԵՐՕԹԻԿ
Վճարը ընդհանուրին մատչելի է: Պրակտիկա ֆրանսերէն լեզուից, ցանկացողների համար — մուզիկա: Աշակերտուհիների պատրաստելը մինչև 4-րդ դասատուն: Առողջարար սարի օդ. հանգիստ տեղ: Դավիդօվսկի հրապարակ, տուն Գամրեկելի № 4, Մ. Երիստովային: (Ն. Հ. Կ.) աո. 2—3

ԴՊՐՈՑ
ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
Երկու սեռի մանուկների համար: Ընդունելութիւնը սկսված է, ուսումը՝ սեպտեմբերի 6-ից. Բեհբութեան փող. սեփ. տ. 25:
(սեպ. 2, 3, 5, 6, 8, 10, 14, 17) 1—8

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ
Յարմարեցրած Խորուսների համար
ԳԻՆԸ 20 ԿՈՊԷԿ
50-ով առնողին 20% զիջում:
Դիմել՝ Армавиръ (Кубан. обл.) Регенту С. Шааняну.
աո. 2—5

ԲԺԻՇԿ
Կ. Յ. Ղազանճեան
Վերադառնալով արտասահմանից Կարս՝ վերսկսեց ընդունել աչքի, ներքին և վեներական հիւանդութիւն ունեցողներին:
(աո.) 4—4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սուլթանների երկրում. Վերջին տեղեկութիւններ. Պարսից Շահի պատասխանը. Շարժումներ և հետևանքներ. Էջմիածնի համագումարը. Պէտք է գործ ճարել նրանց համար. Իշխան Կ. Լուսինեան. Արեշցիների ցաւերից. Մեր ազգային առանձնայատկութիւնը. Պատասխանեցէք. Նամակ Սղնախից. Նամակ Նոր-Բայազէտից. Զրպարտութիւն. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՍՈՒԼԹԱՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՒՄ

XII

Սուլթանների երկրում ձուլող, միացնող գաղափար չը կայ:

Այդ բացասական գիծը շատ նշանաւոր է: Ընդարձակ պետութիւնը ներկայացնում է միայն ժողովուրդների խառնուրդ: Չը կայ քաղաքացիական կապ մարդկանց մէջ, չը կան գաղափարներ և իդէալներ, որոնց ձգտէին պետութեան մէջ ապրողները:

Ապրում է Թիւրքը, ապրում են նրա կողքին հայը, քիւրդը, ասօրին, յոյնը, դրուզը, դերսիմցին և շատ ուրիշ տարրեր: Ապրում են ուրոյն կեանքով, մէկը միւսից բաժան, մէկը միւսից խորթ ու օտար: Իւրաքանչիւրը սղմված և պարփակված է իր մէջ:

Դա նոյնիսկ պետութիւն չէ եւրոպական մտքով, այլ արհեստական կերպով, բռնի ույժի ճնշման տակ, մի տեղ ժողոված ազգագրական տարրերի մի խառնուրդ:

XIII

Տիրող Թիւրք տարրի մէջ, կան այնպիսի քաղաքակրթական ձգտումներ, որոնք բանային զարգացման լայն հորիզոններ ոչ իր և ոչ շրջապատող ազգերի համար:

Իսկ զրկվել գերիշխող դիրքից, նա չէ ցանկանում և չի ցանկայ:

Եւ ահա որտեղ է օսմանեան ողբերգութեան տխուր էջերից մէկը:

Սահմանադրական կեանքի պահանջը սկսել է զգացվել նաև Թիւրք տարրի մէջ. բայց այդ պահանջը այնքան թոյլ է, այնքան անհամարձակ, այնքան քիչ զգացված և մակերևոյթական, որ նա չէ կարողանում հրամայողական բնաւորութիւն ստանալ և այնպիսի հեղինակութիւն ձեռք բերել, որ կարող լինի ազդել կեանքի վրա և վստահութիւն ներշնչէ ոչ Թիւրք տարրերի մէջ:

XIV

Թիւրքիան ֆինանսապէս սնանկացած մի երկիր է եւրոպական կապիտալի և եւրոպական քաղաքականութեան ճնշման տակ: Նա ինքն իրան կաշկանդել է դաշնագրերով, պարտքերով, կոնցեսսիաներով և կիսով չափ ստրուկ է եւրոպացիների ձեռքին:

Այդ հանգամանքը էական նշանակութիւն ունի և Թիւրքիան չէ կարող իր կեանքը տնօրինել այլ կերպ, քան թոյլ կը տան եւրոպացիները:

Թիւրքիան թէև կենդանի համարվում է քաղաքական մի դիակ, որից իւրաքանչիւր պետութիւն ունի ստանալու իր մասը:

Այդ պատճառով Թիւրքիայի բաժանման հարցը միշտ էլ համարվել է հերթական:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Էջմիածին, 28 օգոստոսի (սեփական Թղթակցից)

Սեկցիաների գումարումը տակաւին շարունակվում է: Թղթակիցներին Թոյլատրելի չէ ներկայ գտնվել պարապմունքներին:

Օգոստոսի 27-ին, Վաղարշապատի գաւառապետը ներկայանալով Վեհափառին՝ պատիւ ունեցաւ զեկուցանելու Վեհ. Կաթողիկոսին, որ Փոխարքայի կարգադրութեամբ Վեհափառի Դիւանի կառավարիչ Տաճատ վարդապետին տրված է երեք օր մնալու Էջմիածնում: Վեհի միջնորդութիւնը դրական մերժով չը պսակվեց Փոխարքայի կողմից և Տաճատ վարդապետը երկու օրից յետ հեռանալու է Կովկասի սահմաններից:

Մօտ օրերս Էջմիածնից կը հեռանայ նաև Մաշտոց վարդապետ Փափազեան: Կայ որոշում՝ տալ կոնդակ յիշեալ վարդապետին գնալու Բուլղարիա, վերանորոգչական նոյն միսիայով ինչ մեզանում է սկսվել:

Կենտրոնական Ժողովի նախնական սուր ընթացքի դէմ կան բողոքներ ժողովրդի զանազան մասերից: Երևանից եկած բողոքը աւելի քան ուրիշները՝ խիստ է և բազմաստորագիր:

Ճեմարանի ննջարանի այն բաժնում, ուր պատգամաւորական ժողովի նիստերն է լինում, ամսիս 26-ին բժիշկ Լ. Աթաբեկեան կարդաց դասախօսութիւն «Հողային հարցի մասին»: Դասախօսութիւնը տարրական գիտելիքների մասին լինելով հակաճառութեան տեղիք չը տուեց: Դասախօսի նպատակը գնահատվեց ծափահարութեամբ, որը մեզանում շատ սովորական և էժան գին ունի: Նրանի թէ ունկնդիրները մի բան իւրացրած լինեին դասախօսի «ցիտատներից», որոնք թէ լեզուի կողմից և թէ բովանդակութեան՝ միանգամայն օտար էին:

Ե. Գ. Թէ Վեհափառի դիւանատանը՝ և թէ կենտրոնական ժողովի նախագահի անունով ստացվել են բողոքներ Բեսսարաբիայի թեմի առաջնորդից, որը բացի ռոճիկ ստանալուց և ժողովրդի վզին մի անտանելի բեռն լինելուց, ոչ մի օգտակար գործի ոչ ընդունակ է եղել և ոչ ձեռնարկող. բողոքները նոյնն են հաստատում:

Н.

—

Լենքօրան, 26 օգոստոսի

Ամսիս 23-ի գիշերը, 8 զինված Թուրքեր յարձակվեցին Լենքօրանից 30 վերստ հեռաւորութեան վրա «Սաբաշի Ջուր»-ում գտնվող քարանգլուխեցի Կարապետի վաթագի վրա և յանկարծակի բաց անելով դուռը՝ սկսեցին գնդակահար անել հայ բանւորներին: Սպանվածներն են Մովսէս Խամփերեանցը—Թաղլարեցի, Միքայէլ Մելքումեանցը—Թաղլարեցի:

Անվնաս կորել է Զումշուդ Բաբայեան—Աւետարանոց գիւղացի: Փախուստի դիմելով, Թուրքերի գիրք բռնած ժամանակը ազատվում է մերկ, շպրտելով Կարապետը և գիշերը լուսացնում է ղամիշների մէջը: Ազատված են նմանապէս Աւագ Մելքումեանցը: Կարապետը ճանաչել է Թուրքերից մի քանիսին. քուչորթայեցի են: Յիշեալ սպանվածները փոթորիկի պատճառով մնում են գիշերը Կարապետի մօտ, որոնք և միշտ ձուկ էին տանում Կարապետից: Այդ մի բուռը հայերը շրջապատված լինելով Թուրքերով մտադրած էին մօտ օրերս գործերը փակել և հեռանալ, կասկածելով գրգռված Թուրքերից: Միքայէլ Մելքումեանցին դուրսը բռնում են, բերելով սենեակը՝ կտոր-կտոր են անում չը նայելով նրա աղաչանքին:

Թուրքերը տարել են Կարապետի նաղդ 1143 ր. վեկսիլները, տանը եղածը, բոլոր ալիւրը. ընդամենը վնասը մինչև 3000-ի է հասնում. տարել են Միքայէլի 100 ր. և 6 հատ վեկսիլ—ընդամենը 1000 ր.: Ազատվել են կից սենեակում երեք փոքրիկ մանուկները, որոնց չեն գտել Թուրքերը: Ժողովուրդը յուզմունքի մէջ է մի գուցէ Թուրքերը կոտորած են յատարարում սրանով:

Նշանակված է քննութիւն. տեսնենք ինչպէս կը վերջանայ քննութիւնը և գաւառապետը ինչ կարգադրութիւն կանի: Այս էլ աւելացնենք, որ գաւառապետ Յիսը խոստացել է այս դէպքը անուշադիր չը թողնել:

Լսում ենք, որ այստեղ է նշանակվում տխրահռչակ Երմօլաեւը, հաշտարար միջնորդի պաշտօնով:

Յովհաննէս Եղիեան

—

«Իրշադ»-ի օգոստ. 28-ի համարում տպած է Շուշուց, սեպհական Թղթակցից, հետևեալը.

«Գեներալ Գօլօշչապօվի ծառայութիւնից արձակվելը ամենքին բաւականութիւն պատճառեց: Այդ առիթով երկու կողմերը (հայ և Թուրք) մի հաշտարար, խառն կոմիսսիա ուղարկեցին գաւառ: Ամբողջ ժողովրդի ցանկութիւնն է, անարգանքի սիւնին մեխված տեսնել բովանդակ երկիրը աւերակ դարձնող Գօլօշչապօվին, բռնութեան և զուլումի նրա ընկերները՝ Շուշու ոստիկանապետ Սմարօտսկուն, Զանգեզուրի գաւառի նաչալնիկ Միտկեվիչին և արձանագրութիւնների տնօրէն Գիլչինսկուն:

Հայ և Թուրք խառն կոմիսսիան նոր նշանակված գեներալ-նահանգապետ Բաուէրին դիմաւորեց ճանապարհին:

Կոմիսսիայի անդամների հետ ունեցած տեսակցութեան ժամանակ գեներալը չափազանց ուրախացաւ:

Յոյս կայ, որ Գօլօշչապօվի բռնակալ վարչութեան վերացմամբ ամեն տեղ հաշտութիւնն ու խաղաղութիւնը կը տիրապետէ:

Սակայն մահմեդական ժողովուրդը գեներալ Գօլօշչապօվի զօրքի կողմից այն աստիճան Թշուառացած է, որ նոր նշանակված գեներալ-նահանգապետը պէտք է իր ամբողջ ջանքը գործ դնէ ջնջելու համար այդքան կարօտութեան և Թշուառութեան հետքերը»:

ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Պարսից ընդհանուր հիւպատոսը Թիֆլիսում պաշտօնական գրութեամբ 23 օգոստոսի № 185, յանուն Թիֆլիսի Թեմի առաջնորդ սրբազան Գարեգին արքեպիսկոպոսի յայտնում է, որ նա զեկուցեց յոտս Նորին Կայսերական Մեծութեան Շահի Թիֆլիսում բնակվող պարսկահպատակ հայերի հաւատարիմ հպատակութեան զգացումները, որոնք արտայայտվեցին վանքի տաճարում կատարված հանդիսաւոր մաղթանքով, ինչպէս և հայ հոգեւորականութեան և Թիֆլիսի հայերի բարեմաղթութիւնները երկարակեցութեան մասին:

Այժմ ստացած լինելով պատասխանը, արտաքին գործերի մինիստրի միջոցով, նա պարտք է համարում ուղարկել այդ պատասխանի պատճէնը, խնդրելով հասցնել ի գիտութիւն հայ ժողովրդի:

Ահա այդ հեռագիրը.

«Ձեր հեռագիրը, որով յայտնում էք Նորին Գերապատւութեան Թիֆլիսի հայոց առաջնորդի և հայ ժողովրդի բարեացակամ զգացմունքները, ես հասցրի յոտս Նորին Կայսերական Մեծութեան Շահնշահին, որը հրամայեց արտայայտել Գերապատիւ խալիֆային և հայ ժողովրդին իր արքայական գոհունակութիւնը:

Մուշիր Մուլք

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

—Օգոստոսի 24-ին Ումանից ժանդարմների փոխ-գնդապետ Սամօյլօվը զեկուցանում է ոստիկանական դեպարտամենտին, որ ինքը Ումանում կալանաւորել է գաղտնի տպարան, Վիբօրգի կոչի շարուածքով հանդերձ, և 2 հազար համար պատրաստի մանիֆեստներ: Կալանաւորվել են 4 հոգի, որոնք խուզարկութեան միջոցին աշխատում էին տպարանում:

—Լեհաստանի և Լիտվայի սօցիալ-դեմօկրատների «Կարմիր Դրօշակ» օրգանը հաղորդում է, որ օգոստոսի 2-ի արիւնահեղ անցքի ժամանակ սպանված ոստիկանների Թւում գտնվում են մի քանի ազնիւ և անմեղ մարդիկ, որոնք անկեղծ կերպով նուիրված են յեղափոխական շարժմանը: Օրինակ, ոստիկան Զերվինսկին կապեր ունէր սօցիալ-դեմօկրատների լեհական կուսակցութեան մարտիկ կազմակերպութեան հետ, և նրանց յայտնում էր թէ ովքեր են լրտեսները: Միւս ոստիկան Ֆրանկը, Թագցնում էր իր մօտ արգելված իրեր խուզարկութիւնների ժամանակ և շատ անգամ նախազգուշացնում էր նրանց խուզարկութիւնների մասին:

—Շենկուրի գաւառից հաղորդում են «Сѣв. Лист.»-ին: «Մեծ աղմուկ է հանել Պետական Դումայի նախկին պատգամաւոր Իսուպօվի մտադրութիւնը շրջել գաւառի հարաւային համայնքները ազգաբնակութեանը հաղորդելու նախկին Պետական Դումայի գործունէութեան մասին, որը յայտնի դարձաւ գաւառական բիւրօկրատիային: Իբարանցման մէջ ընկան Շենկուրի իշխանութիւնները, սկսեցին հարցաքննութիւնները, խորհուրդները և այլն, ում հարկն է, թոյլ չը տալ ժողովրդի մէջ ընկնելու արգելված պտուղը, յանձին Իսուպօվի: Սակայն չը նայելով իշխանութեան ձեռք առած միջոցներին և իրան արված նախազգուշացումներին, բայց և այնպէս Իսուպօվը օգոստոսի 12-ից սկսել է շրջագայել ժողովրդի մէջ:

—Վերջին երկու շաբաթների ընթացքում քաղաքական գործի համար կալանաւորների թիւը 3,000-ի է հասնում: Յեղափոխական շարժման գլխաւոր կէտը, Մոսկվան, տուել է մի քանի հարիւր կալանաւորներ: Գաղտնի տպարանները, կատարելագործված կերպով պատրաստված քիմիական լաբօրատօրիաները և զէնքի պահեստները հնարաւորութիւն տուին ոստիկանութեանը համոզվելու, որ Մոսկվայում օգոստոսին պատրաստվում էր զինված ապստամբութիւն, որը զէնքերի և ռազմամթերքների առատութեան շնորհիւ պէտք է գերազանցէր նախկին ապստամբութիւնը: Բոլոր նահանգական քաղաքներում ուժեղացրել են ոստիկանական պահակները, բացի դրանից քաղաքի գլխաւոր կենտրոններում եկող-գնացողների վրա խիստ հսկողութիւն է նշանակված: Այդ հսկողութիւնը պէտք է շարունակվի մինչև Պետական Դումայի գումարվելը:

—Երդուեալ հաւատարմատար Մարգուլիէսը, որ հրաւիրված էր Պետական Դումայի նախկին անդամ Օնիպկօյից իր գործը պաշտպանելու, օգոստոսի 26-ին ուղարկել է Սեւաստօպօլ, երդուեալ հաւատարմատար Կրասնօվին, որ ջերմ մասնակցութիւն ունի Օնիպկօի պաշտպանութեան գործում, հետևեալ հեռագիրը. «Օնիպկօյին դատելու են առաջիկայ շաբաթ: Քաղաքացիական պաշտպանութիւնը հեռացրել են: Դրութիւնը շատ վատ է: Ելենա Իգնատիէվնայի (Օնիպկօյի կնոջ) ցանկութեան համաձայն կաշխատեմ, որ վերջինս կարողանայ ներկայանալ Կայսրուհուն»: Միաժամանակ Ն. Ի. ուղարկել է Կրասնօվին հետևեալ հեռագիրը. «Դատելու են ամուսնուս եկող շաբաթ: Մահվան պատիժ է սպառնում նրան: Հաղորդեցէք հայր Ֆեոդորին և համայնքին, որ անհրաժեշտ է անյապաղ խնդրամատոյց լինել Բարձրագոյն անունով»: Ինչպէս պարզվում է այժմ, Օնիպկօյին մեղադրում են քրէական օրէնքների 100-րդ յօդուածի հիման վրա: Մամուլի մէջ լոյս տեսած տեղեկութիւնները, որ Օնիպկօյին տեղափոխել են Պետերբուրգ, չէ ճշտվում: Նրան փոխադրել են միայն Կրօնշտադի բերդից տեղական կալանաւորութեան տունը: Օնիպկօյի առողջութիւնը առաջվայ նման անբաւարար է: Կալանաւորութեան տան մէջ տիրող պայմանները աւելի են աննպաստ քան բերդինը: («Р. Вѣд.»)

—Պետերբուրգում տեղեկութիւն է ստացվել, որ Սեւաստօպօլում փորձ են արել փամփուշտներն ու գնդակացիրները տիրապետելու: Փամփուշտների պահեստատունն են գնում երեք նաւաստիներ և ներկայացնում պաշտօնական Թուղթը գնդակացիրների փամփուշտներ ստանալու համար: Կասկած ընկաւ այդ Թղթի կեղծ լինելու վրա և արդարև ստուգութիւններից պարզվեց, որ կեղծված է: Նաւաստիները կալանաւորվել են: («Р. В.»)

—Պետերբուրգի սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան բանւորների մէջ ջերմ քննութեան նիւթ է դարձել բանւորական անկուսակցական համագումար հրաւիրելու հարցը: Փօքրամասնականները եռանդուն կերպով պաշտպանում են այդ միտքը: Իսկ մեծամասնականները դէմ են դրան, համարելով, որ բանւորների անկուսակցական համագումար հրաւիրելը վերջիններիս կարող է վանել արդէն որոշ լօզունգ ունեցող կազմակերպութիւններից:

—Օգոստոսի 26-ին ընդհանուր զեմստվային կազմակերպութիւնը Ուֆիմի նահանգի իր գործակալից չափազանց վրդովեցուցիչ տեղեկութիւններ է ստացել: Ներկայումս նահանգի մէջ հաշւում են 1,200,000 սովի մատնվածներ: Դրութիւնը օրէցօր լարվում է և անհամար Թշւառութիւններ սպառնում, նոյն իսկ մօտակայ ապագայում, որովհետև օգնութեան բոլոր միջոցները արագութեամբ սպառվում են:

—Իվանօվօ-Վօզնեսենսկից «Нов. Мысль»-ին հեռագրում են, որ այնտեղ սկսել են մասսայական կալանաւորութիւնները: Բանւորները պատգամաւորական ժողովում որոշել են. եթէ թէկուզ բանւորներից մէկն էլ կալանաւորվելու լինի, այն ժամանակ կանգ կառնի ամբողջ շրջանի արդիւնաբերութիւնը:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

XII

Մեզ մնում էր դեռ խօսել օգոստոսի 14-ին առաւօտեան և երեկոյեան և օգոստոսի 25-ին առաւօտեան կայացած նիստերի մասին, ուր, գլխաւորապէս, քննվեցին առաջարկված բանաձեւեր, և վիճաբանութիւններից յետոյ դուրս բերվեցին որոշումներ՝ իբրև ղեկավարող սկզբունքներ դպրոցական, վարչական և կալուածական սեկցիաների աշխատութիւնների համար: Ապա մեզ պէտք էր խօսել մեր ստացած տպաւորութիւնների մասին և մեր եզրակացութիւնները անել Էջմիածնի համագումարի վերաբերմամբ: Սակայն, ի նկատի ունենալով, որ համագումարը փակվեց օգոստոսի 30-ին Փոխարքայի հրամանով, ինչպէս հաղորդում են Էջմիածնից եկած հեռագրերը (մեր կարծիքով, կառավարութիւնը անօգուտ և աննպատակ քայլ արեց և իր անտեղի միջամտութեամբ խնդրին ուրիշ կերպարանք տուեց. համագումարը արդէն ինքն իրան դատապարտել էր մահվան և ինքն իրան պէտք է փակվէր, զրկվելով հայ ժողովրդի և ազգ՝ սանկցիայից), ուստի մենք կը բաւականանանք արձանագրել միայն այն որոշումները, որոնք ընդունվեցին այդ նիստերում, առաջ բերելով խնդրի լուսաբանութեան համար նաև մի քանի առաջարկված, բայց մերժված բանաձեւներ:

Պէտք է արձանագրենք այստեղ, որ օգոստոսի 24ին, առաւօտեան նիստին, սկսեցին առաջարկել բանաձեւներ:

Ե. Թոփչեան մի խումբ պատգամաւորների կողմից կարդաց բանաձեւների մի ցուցակ, որտեղ շօշափված էին զանազան հարցեր: Նախագահը պատրաստվեց նրանց քուէարկութեան ենթարկելու: Այդ ժամանակ Ա. Քալանթար տուեց հետևեալ հարցը:

«Մեզ առաջարկվում են մի շարք բանաձեւներ վերջնական որոշումներ կայացնելու համար. արդեօք այդ բոլոր բանաձեւները առանց բացատրութեան պէտք է քուէարկվեն իբրև ներկայ ժողովի քննութեան առարկաներ»:

Նախագահն և ժողովականները պատասխանեցին՝ «Այո»:

Ստանալով այդ պատասխանը՝ Ա. Քալանթարը ասաց հետևեալը: «Թոյլ տուէք յայտնելու ժողովին, որ ես բանաձեւների մէջ տեսնում եմ այնպիսիները, որոնց վերաբերութեամբ ոչ մի տեղեկութիւն չունի ինձ ընտրող ժողովուրդը և ես ինձ չեմ կարող համարել լիազօր նրա անունից խօսելու նրա համար այդ նոր հարցերի մասին: Մի ժողով ձայների մեծամասնութեամբ կարող է վճռել միայն այն, ինչ որ այդ ժողովի իրաւասութեան առարկայ է: Մենք ստանալով մի յանձնարարութիւն ժողովրդից չը պէտք է փոքրիկ լիազօրութիւնից անցնենք ինքնիշխանութեան և խօսենք ժողովրդի անունից այն ամենի մասին, ինչ որ մենք ինքներս ցանկանանք: Մեզ ընտրող ժողովուրդը ամենևին չէ ենթադրել, որ մենք այստեղ պէտք է քննենք կալուածքների ընծայաբերութեան, ինքնավարութեան, դիֆֆերենցիալ բնոյթի և ուրիշ այդ տեսակ խնդիրները: Ինձ համար կարևոր չէ թէ ինչ կարծիք ունեն մեր մասին կառավարութիւնը և ուրիշ ատեանները, բայց ինձ համար կարևոր է և պարտաւորական մեզ ընտրող ժողովրդի կամքը: Արդ, զգալով իմ պատասխանատւութիւնը ընտրող ժողովրդի առաջ, ես հրաժարվում եմ ժողովին մասնակցելուց:»

Ա. Ընդունված բանաձեւեր

Գործնական դիւրութեան տեսակէտից նպատակայարմար ճանաչելով սեկցիաների բաժանվելը և միևնոյն ժամանակ ի նկատի ունենալով այն հիմնական սկզբունքը, որ իւրաքանչիւր ժողովուրդ տէր և տնօրէն պէտք է լինի իր բոլոր գործերի, ժողովը յանձնարարում է սեկցիաներին ձգտել իրականացնելու հետևեալ սկզբունքները.

I Դպրոցական

1. Ընդունել պարտադիր և ձրի ուսումն երկսեռ դպրոցներում:

2. Մասնագիտական—գործնական դասընթացներով դպրոցներ և երկրի արդիւնագործութիւնն ու տեխնիկան բարձրացնող հաստատութիւններ, իւրաքանչիւր շրջանի տնտեսական և սօցիալական պահանջների համեմատ:

3. Կիրակնօրեայ և գրագիտութեան շարժական դպրոցներ համապատասխան շրջաններում:

4. Բէալ և զուտ գիտական ուղղութիւն և աշխարհիկ ոգի բոլոր դպրոցներում և բոլոր առարկաների վերաբերմամբ:

5. Կրօնի դասերի թիւը պէտք է չափաւորվի և դասաւանդութիւնը պարտադիր չը լինի այն երեխաների համար, որոնց ծնողները այդ կը պահանջեն:

6. Բոլոր դպրոցներում դասաւանդութիւնը հայերէն է, իսկ օտարախօս համայնքների վերաբերմամբ դասաւանդութիւնը յարմարեցրած պէտք է լինի տեղական պայմաններին և մանկավարժական պահանջներին:

7. Բոլոր դպրոցներում աշակերտներ ընդունվել կարող են առանց ազգի և դաւանանքի խտրութեան:

8. Միջնակարգ դպրոցներում աւանդել վրաց և Թուրքաց գրականութիւն և պատմութիւն:

9. Միջնակարգ դպրոցներում, իբրև ոչ-պարտադիր առարկայ, աւանդվում են վրաց կամ Թուրքաց լեզուները, եթէ այդ թոյլ է տալիս դպրոցի բիւջէտը:

II. Տնտեսական-կալուածական

1. (Բանաձև Ս. Զաւարեանի, որ ընդունվեց 33 ձայնով).

Համարելով եկեղեցական-վարչական կալուածները իբրև համայնացրած ազգային սեփականութիւն՝

ա) Ապահովել հողագործների համայնքներին օգտվել իրանց ձեռքում գտնված հողերից.

բ) Համայնքներին յատկացվելիք հողերի տարածութեան վերաբերմամբ ղեկավարվել անձի համար անհրաժեշտ հողի չափով (Նորմայով):

գ) Անտառները և այլ եկեղեցական-ազգային անշարժ կալուածները կառավարել համայնական-Թաղական, շրջանային և այլ ընտրովի մարմինների միջոցով: Վանական-եկեղեցական կալուածներից ստացված եկամուտները յատկացնել կրթական և այլ ազգային հաստատութիւնների ապահովման համար:

2. (Բանաձև Ս. Զաւարեանի, որ ընդունվեց 37 ձայնով): Կառավարութիւնից պահանջել պետական բիւջէից ընդհանուր կուլտուրական (լուսաւորութեան, գրականութեան և այլ հոգևոր) պէտքերին յատկացվող գումարների այն մասը, որ կարող է հասնել հայ ազգաբնակութեանը, համապատասխան նրա թւի՝ տալ նրան նոյն պէտքերի համար:

3. (Բանաձև Ս. Խաչատրեանի, որ ընդունվեց 33 ձայնով): Դպրոցների և այլ կուլտուրական հիմնարկութիւնների ապահովութեան խնդիրը թողնվում է առեղծվելիք կենտրոնական մարմին և տեղական համայնքներին, յանձնարարելով վերջիններիս ղեկավարվել եկամտային պրոգրեսիվ տուրքի սկզբունքով:

4. (Բանաձև Բունիաթեանի, որ ընդունվեց 31 ձայնով): Ազգային-կուլտուրական ապագայում ընտրվելի մարմինների յարաբերութիւնները հոգևորականութեան և Կաթողիկոսի հետ կարգվի սեկցիաների աշխատութիւնները վերջացնելուց և ընդհանուր ժողովին ներկայացնելուց յետոյ:

III. Վարչական-ընտրական

1. Դպրոցական և ազգային այլ կուլտուրական գործերի ղեկավարութեան համար կազմակերպել յատուկ մարմիններ ընտրողական քառանդամ և պրօպօրցիօնալ սիստեմով և ապակենտրոնացման սկզբունքով:

2. Իւրաքանչիւր համայնքի այդպիսի մարմինը պէտք է ունենայ ինքնուրոյնութիւն տեղական գործերում և ֆեդերատիվ հիմունքներով շաղկապված լինի միւս համայնքների հետ:

3. Վերոյիշեալ բոլոր մարմինները պէտք է կազմվեն այն սկզբունքով, թէ աշխարհիկ և հասարակական բնոյթ ունեցող հարցերը ժողովրդի իրաւասութեան են վերաբերում, իսկ եկեղեցու և հոգևորականութեան բաժին են կազմում միայն ծիսական և դաւանաբանական խնդիրները:

4. Այդ բոլոր մարմինների և առ հասարակ բոլոր դպրոցական-կուլտուրական ներքին գործերի վերաբերմամբ միակ օրէնսդիրն և կարգադրիչը ընտրողական քառանդամ պրօպօրցիօնալ սիստեմով և առանց սեռի ու դաւանութեան խտրութեան ընտրված ռուսահայոց պատգամաւորական ժողովն է:

Բ. Չընդունված բանաձեւեր

1. (Ս. Զաւարեանի): Յենվելով խղճի կատարեալ ազատութեան վրա, կրօնի աւանդման ձևը և էութիւնը թողնվում է տեղական մանր ազգային կուլտուրական հաստատութիւններին, իսկ մինչև վերջինների կազմումը՝ դպրոցների հոգաբարձութիւններին, վերապահելով նոյնիսկ ծնողներին, իբրև անհատների, ունենալ այդ հարցում կատարեալ ազատութիւն:

2. (Ալ. Մաշուրեանցի): Յանուն խղճի ազատութեան, յանուն առողջ քաղաքակրթութեան, կրօնը պէտք է թողնել հասունացած անհատների կամքին:

3. (Տէր-Գրիգոր քահանայի): Կրօնը աւանդվում է իբրև մի առարկայ մեր դպրոցներում

դասերի սահմանափակ թւով և բարեփոխված ծրագրով։

4. (Մանուկեանի)։ Կրօնը տարրական դպրոցներում աւանդել իբրև բարոյախօսական գիտելիք, իսկ միջնակարգ դպրոցներում թողնել աշակերտների ազատ ցանկութեանը։

5. (Ա. Բալայեանի և մի խմբի)։ Բոլոր վանքապատկան կալուածները կարգաւորել ընտրական մարմինների միջոցով և էժանացած գներով տալ աշխատաւոր ժողովրդին, ստացած եկամուտները գործադրել ազգային-կուլտուրական և կրթական կարիքների համար, տէր ճանաչելով այն հաստատութիւնը, որ տէր է ճանաչված համայն ազգի կողմից մինչև օրս, վերջնական լուծումը թողնելով մինչև ընդհանուր ազգային ժողովի գումարվելը և համառուսական ագրարային հարցի լուծումը։

6. (Ց. Սարաֆեանի)։ 1) Բոլոր եկեղեցական-վանքական կալուածները և դրամները կազմում են սեփականութիւն հայ ազգի. նրանց կառավարութիւնը և եկամուտների գործադրութիւնը ազգային հաստատութիւնների համար կախված է ազգային ներկայացուցչութիւնից. 2) որովհետև վանական-եկեղեցական սեփականութիւնները այդպիսով իսկապէս համայնացվում են, նրանք պէտք է մնան իբրև ազգի անձեռնմխելի սեփականութիւն վերոյիշեալ նպատակի համար. 3) որովհետև այդ կալուածները մեծ փոփոխութիւն չեն կարող առաջ բերել գիւղական հողատիրութեան մէջ, աշխատաւոր մասսան պաշտպանվել ընդհանուր-պետական հողային ֆոնդերից։

7. (Ս. Քարտաշեանի)։ Հողաբաժիններ (նադել) ունեցող գիւղացիները ազատվում են առանց այժմ նրանցից ստացվող հողային տուրքից։

8. (Ե. Թոփչեանի)։ Նշանակել եկամտային պրոգրեսսային տուրք դպրոցական և այլ կուլտուրական պէտքերի համար։

Այս չընդունված բանաձևերը ես առաջ բերի ցոյց տալու համար թէ ուրիշ ինչ հայեացքներ էին տիրում արծարծված հարցերի մասին։

Ընդհանուր ժողովները վերջացան օգոստոսի 25-ին. համագումարը բաժանվեց 3 սեկցիաների, ինչպէս ասացինք, որոնք պէտք է մշակէին կանոնադրութիւններ և ծրագիրներ դպրոցական, տնտեսական-կալուածական և վարչական-ընտրողական հարցերի վերաբերմամբ։ Այդ կանոնադրութիւնները և ծրագիրները պէտք է ենթարկվէին ընդհանուր ժողովի քննութեան և վերջնական հաստատութեան։ Արդեօք նրանք պէտք է ենթարկվէին և Կաթողիկոսի վաւերացման, թէ ոչ, այդ մասին կարծիքները շատ տարբեր էին դաշնակցական համագումարի մէջ (օպպօզիցիայի հեռանալուց յետոյ ժողովը դարձել էր զուտ կուսակցական-դաշնակցական), որովհետև այն հարցը թէ ժողովուրդը ինչ յարաբերութիւններ պէտք է ունենայ Կաթողիկոսի և հոգևորականութեան հետ, մնացել էր բաց և անլուծ։ Ինչպէս գիտենք, «ծայրահեղները» պնդում էին, որ Կաթողիկոսի վաւերացումը պէտք չէ, իսկ «չափաւորները» գտնում էին, որ Կաթողիկոսի և հոգևորականութեան միջոցով պէտք է իրագործել որոշումները։

Օգոստոսի 30-ին, ինչպէս արդէն գիտենք, համագումարը փակվեց Փոխարքայի հրամանով։ Բայց փակվելուց առաջ էլ, նա արդէն դատապարտված էր ժողովրդի և հասարակութեան կողմից մահվան և եթէ նա կարողանար նոյնիսկ որևէ օրէնք, կանոնադրութիւն ստեղծել, այդ օրէնքը պէտք է չը ճանաչվէր ժողովրդի կողմից, չը ստանար ժողովրդական և ազգային սանկցիա, հետևաբար, պէտք է մնար իբրև մեռած տառ։ Ներկայ դէպքում կառավարութիւնը գործեց մէկն այն սխալներից, որ յաճախ գործում է բիւրօկրատիան. նա չը թողեց, որ ժողովը մեռնի իր բնական մահվամբ և արագացրեց նրա վախճանը. և իր այդ անտեղի միջամտութեամբ առիթ տուեց դաշնակցականներին ասելու, թէ իրանք ինչ որ մի բան էին ստեղծում, բայց բիւրօկրատիան խանգարեց։

—

Այնքան մեծ դղրդիւնով աւետված «սահմանադիր ժողովը», այնքան անհագին պատրաստութիւններից, աշխատութիւններից, ճառախօսութիւններից և յոխորտական սպառնալիքներից յետոյ այն հետևանքն ունեցաւ, որ քուէարկեց միայն մի քանի բանաձևեր, որոնք չը պէտք է իրականանան կեանքի մէջ, միայն թղթի վրա որ չը պատրաստեց ոչ մի ծրագիր, չը կարողացաւ քննել նոյն իսկ արդէն պատրաստ դպրոցական ծրագիրը, որպէս զի այս սեպտեմբերից մենք ունենայինք գոնէ դպրոցական ծրագիր և վերջացրեց իր անփառունակ գոյութիւնը նրանով, որ «յեղափոխական ակտ» կատարելու կոչվածները, պատնէշների տապալողները, սուինների դէմ կռուել սպառնացողները, հլու և անմռունչ կերպով հնազանդվեցին մի պրիստաւի հրամանին և չը կարողացան նոյնիսկ հրաժարվել տալ «յեղափոխականի» համար այնպիսի անպատուաբեր և անարժան ստորագրութիւն, որպիսին տպված է «Զանգի» մէջ։

Այո, այդպէս է լինում միշտ կեղծ-ազատամիտների, կեղծ յեղափոխականների և կեղծ-սօցիալիստների վախճանը։ Հսկայ ձևանալ խօսքով, փրազներով, բայց վախկոտ մուկն—կեանքի մէջ։

Էջմիածնի համագումարը շատ բան պարզեց, շատ մութ կէտեր լուսաբանեց. նա բացեց հայ ժողովրդի աչքը, նա սթափեցրեց նրան, որովհետև նա մերկացրեց այդ ժողովրդի առաջ Դաշնակցութեան այժմեան ղեկավարների իսկական փիզիօնօմիան և ցոյց տուեց, որ հասել է ժամանակը, երբ ժողովուրդը պէտք է մտածէ ազատվել այդ կուսակցութեան ճիրաններից, բռնապետական խայտառակ լծից և խլէ իր ձեռքն առնէ իր ազգային և հասարակական շահերի պաշտպանութիւնը։

Իրանց յախուռն, չը մտածված ընթացքով, դաշնակցականները շատ բան փչացրին։ Ազգային-եկեղեցական համագումարի գաղափարը վաղուց արծարծված և կենսական պահանջ դարձած մի գաղափար էր. այժմ մի նոր համաժողովի գումարումը բաւական դժուարացաւ և մենք դարձեալ երկար ժամանակ պէտք է գտնվենք քաօսական դրութեան մէջ, մեր դպրոցական, եկեղեցական, կալուածական, ընտրական և կուլտուրական գործերը երկար ժամանակ պէտք է մնան անկերպարան, անորոշ և խառնաշփոթ։

Ամբողջ պատասխանատւութիւնը հայ ազգի, եկեղեցու և պատմութեան առաջ ծանրանում է Դաշնակցութեան վրա, որ իր յախուռն ընթացքով. կրկնում ենք, փչացրեց ամբողջ մի մեծ գործ և ազգային դատ։

Հ. Առաքելեան

ՊԷՏՔ Է ԳՈՐԾ ՃԱՐԵԼ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ

Հայ-թաթարական ընդհարումների պատճառով Դաշնակցութիւնն ստիպված եղաւ կարճ ժամանակում միանգամից խիստ մեծացնել իր զինւորների թիւը, քանի որ այդպիսով միայն հնարաւոր էր աջողութեամբ առաջ տանել ինքնապաշտպանութեան դժուարին ու պատասխանատու գործը։

Թուրք հազարաւոր խուժանների լաւ զինված խմբերի դէմ անհրաժեշտ էր դուրս բերել անձնազոհների որքան կարելի էր բազմամարդ գնդեր. և ահա մենք հպարտութեամբ ականատես էինք լինում, թէ ինչպէս պատրաստակամութեամբ իսկոյն հասարակութեան ամեն խաւերից արձագանք էին տալիս զգայուն ու անձնուէր սրտերը և արիութեամբ նրա դրօշակի շուրջը ժողովւում, իրանց արիւնով փրկելու ֆիզիքապէս անհամեմատ զօրեղ թշնամու խժդժութիւններից իրանց թոյլ ու անօգնական եղբայրների կեանքը, գոյքը և պատիւը։

Եւ գալիս էին նրանք շտապով՝ թողնելով ոմն իր անկախ գործը կամ արհեստը, ոմն իր պաշտօնը և ծառայութիւնը. գալիս էին առժամանակ մոռացութեան տալով իրանց անձնական առօրեայ հոգսերը, ընտանեկան պահանջները. ինքնապաշտպանութեան անհրաժեշտ, սրբազան գործն էր ոգևորում նրանց, ժամանակ չը կար անձնականի, սեփական բարօրութեան և ապագայի մասին մտածելու. ահեղ վտանգի առաջ պէտք էր մոռանալ այդ ամենը. անձնազոհութիւնը և հերոսութիւնը միայն կարող էր փրկել հային վերջնական ջնջումից։

Եւ եկան անձնազոհների երկար շարքերը. եկան բաղխվեցան անհաւասար թշնամու խառնաճաղանճ խմբերին և ջարդեցին ու ցրվեցին նրանց։ Աւազակային ու արիւնոտ ասպատակով յարձակվող այդ վայրենի թուրքերից շատերը արդար պատիժ ստացան հայ կամաւորների գնդակից ու սրից, բայց և շատ հայ քաջեր էլ հերոսական մահ գտան այդ անհաւասար կռիւներում։ Ընկան նրանք, իրանց դիակներով փակելով թշնամիների առաջ նրանց ճանապարհը։ Ընկան նրանք և նրանց արիւնով կարմիր ներկված յաղթութեան պսակները հայ ժողովրդին մատուցին նրանց կենդանի մնացած ընկերները...

—

Հայ զինւորը փառաւոր կերպով կատարեց իր բաժին ընկած ծանր պարտականութիւնը և ահա այժմ, երբ թւում է թէ ընդհարումները վերջանալու վրա են, և նոյնիսկ մի քանի տեղերում կառավարութեան զօրքերը կատարում են իրանց գործը շատ կամ քիչ անաչառ կերպով, արդէն մենք տեսնում ենք, որ հարկադրաբար առաջ է գալիս ինքնապաշտպանութեան անվեհեր զինւորի բաղդը անօրինելու անյետաձգելի խնդիրը։

Նա, ով վտանգի ժամանակ ամենքի պահապան հրեշտակն էր և ընդհանուրի սիրելին, հետզհետէ սկսում է կորցնել իր կարևորութիւնը, արժէքը, հմայքը... Շատ անգամ նոյնիսկ նա դառնում է մի ծանր բեռ ժողովրդի համար և նրա անգործ, աննպատակ կեանքը ձանձրոյթ է պատճառում նոյնիսկ իրան։ Առանձին նշանակութիւն չը տալով այն պատահական անախորժ դէպքերին, որոնք երբեմն առաջ են գալիս անգործ զինւորի և ժողովրդի մէջ, որոնք մինչև այժմ այնքան հազուագիւտ են եղել, որ լոկ բացառութիւններ կարող են համարվել, պէտք է սակայն նկատենք, որ այդպիսի անախորժ դէպքերը հետզհետէ յաճախակի ու սաստիկ բնաւորութիւն կարող են ստանալ, եթէ նրանց ղեկավարները օր առաջ չը մտածեն իրանց այդ պարապ մնացած զինւորների համար իւրաքանչիւրի ընդունակութեան համապատասխան գործ և պաշտօն ճարել զանազան առևտրա-արդիւնաբերական հաստատութիւնների մէջ։

Ճիշտ է, նոյնիսկ զինւորների մէջ այժմ կը գտնվեն այնպիսի անձնաւորութիւններ, որոնք իրանց նախկին համեստ գործը կամ արհեստը թողնելուց և հրացան ու սուրը ձեռք առնելուց յետոյ, դրանցից այնպէս խամացել են, որ այլևս նրանց համար դժուար կը լինի մէջք կռացնել բահի տակ և համաձայնել շատ աւելի քրտինք թափել համեմատաբար աւելի քիչ վաստակելու համար, սակայն համոզված ենք, որ այնուամենայնիւ մեր զինւորների մեծագոյն մասը փափագում է գործ ունենալ և աշխատելն աւելի գերադաս է համարում քան թէ անգործ, ձանձրալի և գայթակղեցուցիչ կեանքը...

Սակայն այստեղ առաջ գալիս է մի մեծ դժուարութիւն։

Յայտնի է, որ այդ զինւորները չունեն թէ մեծ դրամագլուխ և թէ անհրաժեշտ փորձառութիւնն ու հմտութիւնը անկախ գործ սկսելու համար, ուստի և նրանք ստիպված պէտք է լինեն տեղ որոնել հայ վաճառականի, կապալառուի, արհեստագէտի, կապիտալիստի և կալուածատէրի ձեռնարկութիւնների մէջ։ Իսկ սրանք էլ դժբաղդաբար հէնց այն դասակարգն են կազմում, որոնց դէմ Դաշնակցութիւնն այս վերջին տարում սկսել է մի կատաղի, և նոյնիսկ շատ տեղերում անմիտ հալածանք, գրոշմելով այդ բոլորի ճակատին բուրժուա արհամարհական անունը։

Այն կազմակերպութիւնը, որ կեանք է առել համազգային (թիւրքահայկական) դատ վարելու թիւրք կեղեքող կառավարութեան դէմ, նպատակ ունենալով քաղաքական հաւասարութեան և արդարութեան իրաւունքը ձեռք բերելու մի ստրկացած ժողովրդի համար, նա այսօր իրան հրապարակում է լոկ աշխատաւոր դասակարգի շահերի պաշտպան ընդդէմ միւս բոլոր դասակարգերի և նա որ մեծ աջողութեամբ կարող էր պատուաւոր միջնորդի դեր կատարել կեղեքող և կեղեքվող դասակարգերի մէջ փոխադարձ զիջումներով նրանց համաձայնութեան բերելու և այդպիսով երկուսի էլ շահերը չը վտանգելու, նա այսօր մի աւելի լաւ գործի արժանի եռանդով զբաղված է միայն ծիծաղելի ու չնչին գործադուլներ սարքելով և իր շրջիկների խելքին անհասկանալի հողային խնդիրների միջամտելով...

Իսկ միևնոյն ժամանակ քաղաքներում հետզհետէ բազմանում են պարապ զինւորները, և չէ՞ որ անգործութիւնն ամեն չարեաց ծնող է... Պէտք է շուտով օգնութեան հասնել նրանց և թողնել որ հայ ժողովրդի կուռքը դարձած ինքնապաշտպանութեան վեհ զինւորը անարժան ընթացք ստանայ արատի մէջ գլորվի...

Անհրաժեշտ է շուտով գործ ճարել պարապ մնացած զինւորների համար, եթէ ոչ առաջ կը գայ մի մեծ չարիք թէ հասարակութեան և թէ գուցէ նոյնիսկ Դաշնակցութեան համար։

Լ. Մարկոսեան

ԻՇԽԱՆ Կ. ԼՈՒՍԻՆԵԱՆ

Մեզ ղրկուած մահազդէ մը խորին ցաւով կիմանանք թէ իշխան Կիւլ Լուսինեան որ ժամանակէ մը ի վեր հիւանդ պառկած էր, օգոստոս 12-ին մեռեր է Պարիզի մօտ Նէօյիի Լուսինեան ապարանքին մէջ։ Իր յուղարկաւորութեան հանդէսն երէկ երեկոյ կատարուած կը լինի Պարիզի Հայոց եկեղեցիին մէջ (15, Rue Jean Goujon) ուր իր մարմինը ի տես դրուած էր։

Հանգուցեալ իշխանը 80 տարեկան կար։ Մեծ եղբայրն էր հանգուցեալ Խորէն արքեպ. Լուսինեանի, որի հետ մէկտեղ իր կրթութիւնն և ուսումն առած էր Վիեննայի Մխիթարեան վանքին մէջ։ Հոն հրատարակուած է Հ. Ամբրոսիոս Վ. Գալֆայեանի հնդհանուր Պատմութիւն Ընդհ. ազգաց։ Հ. Սարգիս Վ. Թէոդորեանի և Հ. Գաբրիէլ Վ. Այվազեանի հետ մէկտեղ Մխիթարեան Միաբանութենէն բաժնուելով Հայաստանեայց մայրենի եկեղեցին դիմելէն յետոյ, ժամանակ մը վարած է Բարիզի մէջ իրենց հիմնած Հայկազեան վարժարանի տեսչութիւնը։ Երբ պարտքի տակ ճնշուելով փակուեցաւ այդ վարժարան, Հ. Ամբրոսիոս Վ. Գալֆայեան թողլով կրօնական պաշտօնը, ամուսնացաւ ֆրանսացի ազնուական տիկնոջ մը հետ որ սակէ մի քանի տարի առաջ մեռաւ։ 878-ին իր եղբայր Գեր. Խորէն Արքեպ. Գալֆայեան (Նարպէյ-Լուսինեան) Հայ ազգին կողմէն պատուիրակութեամբ Բեռլինի ղրկուած միջոցին, հոն գտնելով Լուսինեան ցեղէն սերած և առոր համար վաւերական գրութիւններ ունեցող անձնաւորութիւն մը, և անոր հետ իրենց ազգակցութիւն երևան գալով, թէ արքեպիսկոպոսն և թէ Բարիզաբնակ իր մեծ եղբայր սկսան այնուհետև Լուսինեան ստորագրել, եթէ չենք սխալիր։ Իրենց այդ ազգակցութիւն հաստատելու համար թէ ֆրանսերէն և թէ հայերէն լեզուով տետրակներ կան հրատարակուած։ Մենք այդ կնճռոտ խնդիր լուծելու համար յատուկ ուսումնասիրութիւն մը չենք ըրած. բայց մեզ համար երկրորդական նշանակութիւն մը ունի այդ. էականը այս է որ Իշխան Կիւլ տր Լուսինեան կոչուած անձնաւորութիւնը մեծ մարդ մ՚էր, ոչ թէ իշխանական ցեղէ մը սերած լինելուն համար, այլ թէ իր սրտի ազնիւ զգացումներով և թէ հայ ազգին մատուցած իր գրական ծառայութիւններով։ Իշխանական հարստութիւն մը չունէր, բայց սիրտը հարուստ էր զգացումներով և շատ մը հայ և ֆրանսացի ուսանողների և ուսանողուհիների նիւթապէս նպաստած է Բարիզի մէջ, մինչդեռ շատ մը հարուստ Հայեր կան, որոնց սիրտը աղքատ է և իրենց կրթութիւնն ալ հարևանցի լինելով, չգիտեն գնահատել ուսումն ու գրականութիւնը և զայն քաջալերելու մէջ հաճոյք մը զգալու ընդունակութիւնը չունենն։ Իշխան Լուսինեանի գրական վերջին աշխատութիւնը, Ֆրանսահայ երկխօսոր և պատկերազարդ Բառարանը, անմահական փառաւոր արձան մ՚է որ իր ձեռքով իրան համար կանգնած եղաւ իր կենդանութեան ժամանակ։

Լուսինեան գերդաստանի վերջին ճրագ մ՚ալ մարեցաւ Բարիզի մէջ։ Փառք իր անուանին և հանգիստ իր ոսկորներին։

(Արմենիա)

ԱՐԷՇՑԻՆԵՐԻ ՑԱՒԵՐԻՑ

Զուտ հայերից մի տնտեսական վարչութիւն կազմելու նպատակով արէշցիների հանդերձ համախօսականներով տրված խնդիրները յարգվեց վարչութեան կողմից. սակայն դա շատ և շատ անբաւարար միջոց է նրանց ապագան ապահոված համարելու համար։ Մարդ քանի մտածում է այդ չուառների ապագայ բարօրութեան մասին, միշտ և միշտ գալիս է այն եզրակացութեան, որ ամենալաւ միջոցն է Արէշի այդ մի բուռն հայերին համախմբել ի մի, շաղկապել մի գիւղական վարչութեամբ, որով և՛ կը զարգանայ առուտուրը, և՛ կուժեղանան ֆիզիքապէս, և կը սկսվի ներքին մրցումն, և թէ այդ հաւաքական ոյժերի շնորհիւ կը բացվեն ուսումնարաններ և Արէշը որոշ աստիճանով կը բարձրանայ իր ներկայ ընկած դրութիւնից. Արէշը իր ունեցած կարողութիւնը, փարթամութիւնը, շքեղութիւնը իր անտարբերութեան շնորհիւ կորստի մատնելով, չքաւոր-աղքատ տաք կը դնի մի առաւել փայլուն, մի առաւել նախանձելի կեանքի նախագաթի շէմքին. ուստի այդ առիթով բարի իղձերով զինված անձինք ամիսների ընթացքում խօսում, յորդորում և ծրագիրներ էին կազմում և սպասում էր այդ հարցի աջող ելքին. ահա մօդական գաւառի մի նշմամբ, շնորհիւ մի քանի անմիտ «աղսաղկալների»—գիւղական համայնքի առաջադիմութեան միջոց խարիսխ դարձած այդ անձանց, բոլորի փայփայած միտքը միանգամայն, գուցէ վերջնականապէս, ջախջախվում է և հարցի լուծումը լինում է անաջող։

Մի ընդարձակ և մեծ գիւղ կազմելու համար, տեղագրական յարմարութեան տեսակէտից, ամենանախադասելի վայրն է Արէշի կենտրոնը—Հաւարիկը և իր շրջապատը. սակայն հաւարիկեցիք միւս գիւղերին համաձայնվում են տալ միմիայն տների տեղը և ուրիշ ոչինչ. միւս գիւղացիները դարձեալ պիտի տիրապետեն, հերկեն իրանց հողը և հողային հարցում միւս գիւղերը իրանց բոլորովին անջատ պէտք է համարեն Հաւարիկից. այլ կերպ ասած, հաւարիկեցիք օգտվում են այդ յարմար դէպքից և իրանց նման աւերված ընկեր-հարևան հայ գիւղերին արտաքին թշնամիներից իրանց պատնէշ կացուցանելով, տալիս են նրանց լոկ տների տեղը—մի ձգտում, որպիսին թէ ներելի չէ և թէ պատիւ չէ բերում նրանց։ Իսկ միւս գիւղերը միանում են այն պայմանով միայն, որ հաւարիկեցիք և իրանք խառնեն իրանց հողերը, կազմեն մի համայնական սեփականութիւն առանց կէտ անգամ խտրութիւն դնելու հաւարիկեցոց և իրենց մէջ—մի պահանջ, որ թէ իրաւացի է, թէ օրինակելի։

Եւ այդ առիթով ծագած վիճաբանութեան շնորհիւ ջախջախվեց ի մի համախմբվելու հարցը, որը այնքան բարոյապէս և նիւթականապէս օգտաւէտ և շահեր պիտի պատճառէր Կուր գետի կոյր ժողովրդին։ Ի՞նչով արդարացնել «աղսաղկալների» այդ նեղ, շահասիրական, անհեռատես վարմունքը. ոչնչով. նրանց սրբազան պարտքն է կրկին դառնալ այդ հարցին, գուրգուրել այդ միտքը, քաջ իմանալով, որ Արէշի այն փարթամութիւնը, որ այրվեց թուրքի կրակով, կրակի բովում մաքրվող, զտվող ոսկին կը լինի, եթէ օգտվեն յարմար դէպքից, համախմբվեն ի մի, փարվեն իրար, նախ՝ բոլոր գիւղերի հողերը խառնեն, ապա՝ հաւասարաբաժնութեան սկզբունքով անխտրաբար, անկեղծ, ամենայն արդարութեամբ բաժիններ հանեն իրանց և միւս գիւղերի համար։ Պէտք է անցեալը խրատ լինի ապագայի համար. այս արիւնոտ տարիները անգամ միթէ՞ անկարող եղան ազդելու մեր ապառաժ սրտերի վրա. չէ՞ որ նրանք բոլորը, դարերով անդուլ ջանքերով այնքան շէնացրած ժողոված կայքը և հարստութիւնը մի քանի ժամվայ միջոցում թողեցին անգութ յափշտակողների ձեռքին. չէ՞ որ նրանք իրանց սեփական կաշուի վրա զգացին այն բոլոր կսկիծները ու մրմունջները, որոնց լոկ նկարագրութիւնից զգացվում են հեռաւոր անձինք. չէ՞ որ հէնց այժմ Արէշի օդը լցված է էլեկտրականութեամբ և սպառնում է փոթորկի. թող այդ մեծ այգիներին և հողերին տիրապետող «աղսաղկալները» լաւ մտածեն, որ դա այն հողն է, որը մի րօպէի մէջ այնքան հեշտութեամբ, առանց վարանման թողեցին այլոց սեփականութիւն և իրանց չոր գլուխը միայն ազատել կամեցան։

«Աղսաղկալների» այդ վարմունքը վատ է ազդել գիւղական միջին, չքաւորագոյն մասի միջին, դասակարգի վրա. և նրանք տեսնելով, որ «միանալու» հարցը իրականութեան չը ստացաւ, կամենում են գաղթել մի աւելի ապահով վայր. զրկված լինելով ամեն ինչից, ազատած լինելով միայն իրանց կինն ու երեխաները, օրեկան հազար ու մի անհամար լուրեր լսելով, նրանք յուսահատված կամենում են թողնել իրանց հողը, որը վերջին դէպքերի առիթով այնքան ընկել է նրանց աչքից։ Բայց ահա այստեղ էլ ասպարէզ են դուրս գալիս թուրքամոլ, թուրքասէր անձինք, որոնք իրանց տխուր անցեալով, գոյութեամբ խեղճ ժողովրդի աչքին հող ու մոխիր են փչել, վարկ ձեռք բերել—հիպնօտիզացրել. այդ թուրքամոլները ոչինչ չեն կորցրել, թերևս օգտվել են. իրանց թուրք բարեկամների շնորհիւ հայի այգուց կտրած փայտերից ժողովել են տուն շինելու մի քանի նիւթեր, կոճ կարասիք և այլն. պարծում են ուրախ, հերոսաբար առաջին, աղէտից անզգայ և կամենում են համոզել գաղթողներին, որ «եթէ աշխարհը կը խաղաղվի, մենք էլ եօլա կը գնանք, եթէ չի խաղաղվի, որտեղ էլ լինենք պիտի կոտորվենք»։ Եւ համոզվում է Արէշի դիւրահաւատ ժողովուրդը. բայց ինչ է նշանակում «եօլա կը գնանք». այդ մի քանի բառերի մէջ պարունակվում է Արէշի ժողովրդի տասնեակ տարիների նկարագիրը, որի մէջ արէշցու կարմիր արիւնը խառնված աղի արցունքի հետ, լոկ բողոքներ, լոկ տրտունջներ է առաջացրել. այո, նա «եօլա կը գնայ» թուրքի ոտը լիզելով, սողոսկելով, իր ընտանիքի առաջ թուրքի սխրագործութիւնները պատմելով ու դրուատելով։

Արէշցոց անցեալ կեանքի նկարագիրը տխուր է, անպատուաբեր, վարկ բեկանող։ Արէշի հայը, որ թուրքի կոխկից քարշ արած հրացան է տեսել, նրան իր թթի ծառերից բաժին է հանել, նրա համար արտ է հնձել, հող է հերկել, խոտ է հարել, իսկ գոմէջը գողանալիս հարկի չափ մի գումար է տուել, որ յետ ստանայ. իսկ այսօր. այսօր նա պէտք է անէ իր արածների կրկնապատիկը, պէտք է չքանայ Արէշի նահապետական ընտանեկան սրբութիւնը և թուրքը պէտք է ծանրաբեռնվի հայի շինքին որպէս մի անպատկառ, աներես պահանջող. և ինչ երկարացնենք երբ արդէն սկսվել է այդ կեանքը... Մազրլուում, որ կողմը նայում ես, ուր աչք ես դարձնում մօսիններով ու մաուզերներով զինված թուրքեր են, որոնք նոյնակերպ զինված ման են գալիս պրիստաւի մօտ և իրանց տէր համարում Մազրլուին. որոնց վավաշոտ, կրքոտ հայեացքներին մարդ չէ կարողանում համբերել, մի րօպէ արիւնը գլուխն է տալիս և արդար զայրոյթը խելագարութեան հասցնում. այդ բոլորը չը տեսնելուն է գնում մազրլվեցին, կամ երբեմն երբեմն իրար մէջ մունջ-մունջ տրտունջներ են յայտնում. «չէ, չէ կարելի, բաւական է» և վերջացնում են «ինչ անենք, ո՞ւր գնանք» խօսքերով։

Արէշցոց բազմաթիւ ցաւերի պատմութեան սա մի ծայրն է միայն. թերթենք միւսը։

Մարդու ոսկորների վրա սարսափ է սողում, երբ մարդ ժամերով ճանապարհ է գնում և մի անց ու դարձ անողի չէ պատահում. միթէ այսքան ամայացել է Արէշը. չէ՞ որ բոլոր հայերը վերադարձել են գիւղերը. ուր են նրանք. ճանապարհները խորտ ու բորտ, անհարթ. մօտենում ես օբային. կեանքը մեռած է այնտեղ. շարժվող անձինքը թւի թէ ձանձրացել են իրանց ապրելուց. օբաների ներքից դուրս են գալիս հիւծված, մաշված, մազը երեսին չորացած, փորը մէջքին կպած մարդիկ, խօսում են բիկ-բիկ, անհասկ, զրուցում են մունջ-մունջ, անհամարձակ, շրջում են մռայլ, մտախոհ։

Ի՞նչ անեն խեղճերը. երբ ենթայանձնաժողովը ցորեն էր բաժանում Մազրլուում, հինգ չուալ չը գտնվեց, որ ցորեն առնեն. մէկը իր բաժինը կոնքերն էր առնում, միւսը՝ սնդուկը, երրորդը՝ վերմակի երեսաստարը չուալի ձևի տալով նրա մէջ։ Ամառ է. արտ հնձելու, խոտ հարելու ժամանակ է, ոչ մանգաղ ունեն և ոչ տեղ. հնձածը պէտք է ժողովեն, կալսեն, գարմանը հաւաքեն, բայց նրանք ոչ եզ, ոչ գոմէջ, ոչ կամի, ոչ թի և ոչ մարագ ունեն. Հող պէտք է հերկեն, չալթուկի կալը պիտի ծեծեն, իսկ մազրլուեցիք չունեն և ոչ մի անասուն, իսկ բոլորը զուրկ են արօրից, սերմից. 70 տուն ունեցող գիւղում մի չորքոտանի անասուն չը լինելը դիւրին բան չէ. ինչով կարելի է այդ 70 տան արտը ժողովել, կալը ծեծել, հողը հերկել և այլն. իսկ եթէ մազրլուեցին հողը սերմ չը ձգէ, ինչի՞ վրա յոյս դրած նա իր գոյութիւնը պահպանված համարի։ Սրանք այնպիսի կարիքներ են, որոնց մասին թեթև թռուցիկ գրելով անցնելով բաւարարութիւն չէ տրվում. այդ բոլորը կատարվում, գլուխ է գալիս փողով, իսկ արէշցին սև կօպէկի կարօտ է. ի՞նչ անէ և ում դիմէ. կամենում է օգտվել իրան քանդող թուրք քիրվայից, կորցնում է իր պատիւը, ինչն իրան էլ է դատապարտում. չէ կամենում նրա օգնութեան դիմել, իր ընտանիքի, իր որդոց բերնի հացն է մնում դաշտում և անձրևից փչանում։

Խորհենք մի րօպէ զգացվելով և այդ թշուառների դրութեան մէջ մտնելով։

Արէշը մի օրվայ մէջ ենթարկվելով աւերի, սարսափի, հրացանաձգութեան, կորցնելով քաջ տանուտէրին իր ընկերներով, թողած տուն, տեղ, կարողութիւն, շաղա-շուղա, առանց ինքը իրան հաշիւ տալու իրան ձգեց Ղալաբաշի. այդ բոլորը կատարվեց այնքան անսպասելի, այնքան արագ, այդ գործողութիւնները կատարվեցին այնքան տենդային դրութեան մէջ, որ այդ բոլորը նրանց երազ թւաց, բայց ամեն չուառ անողոք իրականութիւնը իր պահանջների մանրակրկտութեամբ ցոյց տուեց արէշցուն, որ դա ոչ թէ երազ է, այլ մի վտանգաւոր խաղ. ապրելու միջոցներից զուրկ արէշցին վշտերի, պահանջների դիմաց ընկճվեց, տեղի տուեց նրանց, մինչև այն աստիճան, որ յուսահատութիւնից ինքը իրան ձգեց իր արիւնոտ հողը. նա գնում էր կարծելով թէ փախչում է վշտի, կարիքների, պահանջների աշխարհից. բայց իր հողի վրա նա աւելի պահանջների առաջ կանգ առաւ. Ղալաբաշում նա լոկ ուտելու, խմելու և հագնելու հոգսով էր ծանրաբեռնված, իսկ այստեղ, Արէշում, նա իր առաջ տեսաւ անվերջ պահանջների շարքեր—տան, մարագի, գոմի, արօրի, սայլի, եզի, գոմէշի, ցորենի, սերմացուի, աղի, նաւթի և այսպիսի հազար ու մի պահանջների առաջ նա դարձեալ մնաց շուարած. այդ պահանջների $^1/_{10}$ մասին անգամ բաւարարութիւն տալու հնարաւորութիւն չունէր նա։

Եւ արէշցիներից շատերը երբեմն վշտերին զիջումներ տալով, յաճախ էլ նրանց տեղի տալով, գլորվում են յատակ. ոմանք էլ մօտենալով իրանց թշնամի թուրք քիրվաներին, օգտվում են նրա լծկաններից, խոզից, մածնից, և սայլից, և դրանով իրաւունք տալիս որ իր թշնամին մտնի իր տունը և ոտնձգութիւններ անի...

Չէ, պէտք է, անպատճառ պէտք է արէշցոց ազատել այդ անտանելի վիճակից. պէտք է ցաւել նրա վրա, կարեկցել, բռնել նրա թևից, կեանքի այդ սարսափելի տանջանքներին հանել և կանգնեցնել իրական պատուաբեր կեանքի շէմքին. նա ոչ սարօզցիների նման է և ոչ խոյլըրցիների. նա կղզիացած է հայերից, նա շրջապատված է իրանից 15 անգամ բազմաթիւ թուրքերով. նա էլ զգում է իր անպատուաբեր դրութիւնը. բայց ելք չէ գտնում ազատվելու այդ քաօսից. պէտք է նրանց հանել Արէշից և բնակեցնել մի բազմահայ վայրում։ Ահա՛, ահա նրա փրկութեան միակ ելքը. հակառակ դէպքում նա կը սուզվի, կը խորասուզվի իր նստած տղմի մէջ...

Սահակ քահ. Տէր-Պօղոսեան

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ

Ութսունական թւականների վերջերին, երբ ուսանող էի Ժընևում, սրամիտ իմպրեսարիօներից մէկը մի խումբ վայրենի մարդիկ էր բերել այնտեղ, իբրև մի հազուագիւտ բան, ժողովրդին ցոյց տալու և փող վաստակելու համար։ Իսկապէս, դա մի հազուագիւտ խումբ էր, կազմված բուշմէն և հօտենտօտ անունով աֆրիկեան երկու ամենավայրենի ցեղերի ներկայացուցիչներից, իրանց ամբողջ ընտանիքով, որոնց մէջ կային մանկահասակ երեխաներ էլ։ Մի խումբ ուսանողներ այդ վայրենիներին տեսնելու գնացինք հռչակաւոր բնագէտ (այժմ հանգուցեալ) Կարլ Ֆօգտի օգնական (այժմ պրօֆէսօր) Իւնգի ուղեկցութեամբ։

Յարգելի պրօֆեսօրը մեզ այդ վայրենի մարդուկների ֆիզիքական կազմի բոլոր առանձնայատկութիւնները մի առ մի ցոյց տալուց ու մանրամասն նկարագրելուց յետոյ, իր մօտ քաշեց մի 5—6 տարեկան շատ չարաճճի երեխայ և ասաց ուսանողներիս։

«Տեսնում էք այս աշխոյժ երեխան, եթէ սրան վերցնենք մեր ուսումնարաններում կրթելու և ուսում տալու, կը տեսնենք, որ սա իր ընդունակութիւններով ոչինչով չի տարբերվի մեր՝ եւրոպական ցեղի երեխաներից ու նրանց հետ զուգընթացաբար կը զարգանայ... մինչև 11—12 տարեկան հասակը։ Իսկ այդ հասակին հասնելուց յետոյ սրա մտաւոր ընդունակութիւնները հետզհետէ կը նուազեն և շատ շուտով բոլորովին կանգ կառնեն ու կը քարանան»։

Պրօֆեսօրի այդ խօսքերը ինձ վրա շատ խիստ ազդեցութիւն ունեցան և ես փառք տուեցի ալլահին, որ հայերս այդ մարդուկների ցեղին չենք պատկանում ու դրանց սահմանափակ ընդունակութիւնները չունենք, քանի որ տարեկան մինչև իսկ մի քանի տասնեակ համալսարանաւարտներ ենք ունենում։

Անցել են այդ ժամանակներից մօտաւորապէս քսան տարի, որի ընթացքում թէև, զանազան հանգամանքների պատճառով, ես զրկված էի իմ հայրենիքի և հայրենակիցներիս մտաւոր կենտրոններում ապրելու հնարաւորութիւնից, բայց միշտ աշխատում էի հետևել մեր պարբերական մամուլին ու գրականութեանը և միշտ սրտի բերկրանքով էի նկատում, թէ ինչպէս նոր ու նոր բողբոջներ էին երևում մեր գրականութեան ու հասարակական գործերի անդաստանում, որոնց մօտիկ ապագայի համար ես մի մի տաղանդներ էի երևակայում։

Թէև շատ շուտ էր գալիս «ապագան» և ուսանողական նստարանի վրայից տաղանդի յոյսեր խոստացող բողբոջները երբէք չէին ծլում ու ծաղկում, բայց և այնպէս ես վաղուց մոռացած լինելով թէ բուշմէն երեխային և թէ պրօֆեսօր Իւնգի խօսքերը, միշտ այդ բողբոջների չորանալը արտաքին անպատեհ՝ ցենզուրական, քաղաքական և ուրիշ այլ և այլ հանգամանքների էի վերագրում։

Սակայն խորտակվեցին, անհետացան այդ բոլոր կաշկանդիչ ու աննպաստ արտաքին հանգամանքները և ընդարձակ ասպարէզ բացվեց բոլոր դեռ չը ծլած բողբոջներին ծլելու ու ծաղկելու, բայց... բայց ինչ դուրս եկաւ։ Այն բոլորը, որոնք դեռ երէկ, անցեալ օրը մի-մի, եթէ չասենք տաղանդ, գոնէ աչքի ընկնող հասարակական ու գրական գործիչներ պիտի դառնային այսօրվան համար, մի-մի հատ ժամաշապիկ և ուրար վերցրած էջմիածին վազեցին...

Էջմիածին վազեց և այն մարդը, որը երիտասարդութեան հասակում Սպենսերի ու Հ. Միխայլովսկու թէօրիաներն էր ժողովրդականացնում հայ մամուլի մէջ։ Էջմիածին վազեց և դեռ նախկին «Մուրճի» մէջ մարքսիզմի ու էվօլիւցիայի կողմնակից էջմիածին վազեց և այն մարդը, որը ուսանողութեան ժամանակ հայութիւնից հեռացած կօսմօպօլիտ էր։ Մի խօսքով՝ բոլորը, բոլորը, որոնք դեռ երէկ ու անցեալ օրը մի մի «բողբոջներ» էին համարվում, էջմիածին վազեցին...

Դա այնպիսի մի աչքի ընկնող դէպք էր ու բնորոշ հանգամանք, որ ես ակամայից յանկարծ յիշեցի թէ բուշմէնի երեխան և թէ պրօֆեսօրի խօսքերը։ Ճիշտ է, այո, մենք բուշմէնների ցեղական առանձնայատկութիւնը չունենք բոլորովին, բայց և փաստերը ապացուցանում են, որ մենք այդ առանձնայատկութիւնից բոլորովին էլ զուրկ չենք։ Բուշմէնների մտաւոր ընդունակութիւնները կանգ են առնում ու քարանում են 11—12 տարեկան հասակում, իսկ հայերինը, ինչպէս երևում է, կանգ են առնում 25—30 տարեկան հասակում։ Եւ որովհետև 25—30 տարվայ ընթացքում զարգանալու ընդունակ ուղեղը շատ աւելի պաշար կարող է վերցնել, քան 11—12 տարեկան երեխայի ուղեղը, ուստի կարելի է ասել, որ հայ ինտելիգենտի ուղեղը ոչ թէ քարանում է, այլ մի տեսակ չիլա-շըրփով է դառնում, անկարող լինելով միմիանցից առաջ բերել զանազան միմեանց բոլորովին ներհակ ու հակառակ փիլիսոփայական աշխարհահայեացքներ ու գաղափարական հոսանքներ։ Այդ տեսակ ուղեղների համար Սպենսեր, Միխայլովսկի, Մարքս, Հեգել, Զօհրապ, Նիցշէ, Պատկանեան, Րաֆֆի, Լասալ և այլն, և այլն բոլորն էլ վերջին հաշւով միևնոյն բանն են և դրանց բոլորի հետևողներն էլ վերջին հաշւով կամ աբեղայ և կամ տէրտէր պիտի դառնան։

Ճիշտն ասելով, մինչև վերջին ժամանակներս ես չէի կարողանում հասկանալ, թէ ինչ է հայերիս ազգային առանձնայատկութիւնը, որի մասին այնպէս շեշտում ու յաճախ խօսում էին Դաշնակցութեան ղեկավարները։

Այժմ, այս էջմիածնի ժողովից յետոյ, ինձ համար այդ բանը բոլորովին պարզվեց։ Եթէ այդ ժողովը այն չը դուրս եկաւ, ինչ որ ոմանք սպասում էին, եթէ նա իր նպատակին չը կարողացաւ ծառայել, գոնէ դա ինձ առիթ տուեց յիշելու և բուշմէնին և պրօֆեսօր Իւնգի խօսքերը և դրանց հիման վրա կարողացայ գոնէ ինձ համար պարզել, թէ ո՞րն է մեր ազգային առանձնայատկութիւնը։ Թէև դա ինձ համար, մխիթարական չը լինելուց զատ, շատ փաղանց ցաւալի բան է, բայց, իբրև մի նոր գիւտ, գուցէ գիտութեան համար գնահատելի լինի.

Խ. Աղամ

ՊԱՏԱՍԽԱՆԵՑԷՔ

Մտաւոր կամ հասարակական հարցերում երբ մի կարևոր խնդրի առիթով տարբեր հայեացք ու անհամաձայնութիւններ կան, որ պէս զի երկար վէճերով ժամավաճառութիւն չը լինի, խնդրի արդարացի լուծման համար ցանկալի են հետևեալ պայմանները։

Նախ, որ վիճող կողմերը միմեանց լսեն համբերատար ուշադրութեամբ, երկուսն էլ դիմէին փաստերի ոյժին և խոնարհվէին միայն ճշմարտութեան։

Երկրորդ, որ կողմերն էլ փախուստ տային անձնական կրքերից և վիրաւորանքներից, ձգէին միմեանց վարկաբեկ անելու արուեստն ու սովորութիւնը, որ տկարի միակ զէնքն է և փախչելու միջոցը։

Երրորդ, որ հակառակ կողմը իր հակառակորդին պատասխանը այնպիսի հերքումներով տար, որ շատերին էլ համոզէր, այլ ոչ թէ պատասխանէր միմիայն պատասխանած լինելու և ձևական մի պարտք կատարած լինելու համար։

Եթէ այս պայմանները ընդունելի են, այն ժամանակ այս երկրորդ բաց նամակով էլ խնդրէք Բագուի մեր դաշնակցականների համոզեցուցիչ պատասխանը։

Նամակ երկրորդ

Էջմ. կենտրոնական ժողովի պատգամաւորներ ընտրելու առիթով ձեր գիրքը Բագ մեզ համար միանգամայն անըմբռնելի և բացատրելի էր։ Մենք շատերս շատ մնացել էինք զարմացած, երբ ձեզ, պաշտպաններին էինք ճանաչում, տեսանք խալիֆաների գիրում և մեզ, որպէս ժամնուլ «Մոնթեր», ճիպոտի և «փալախ տակ։ Սակայն ձեր գործ դրած ճիպոտ ցաւից շատ էլ երկար չը տևեց մեր զար մանքն ու ապշութիւնը։ Շուտով հիասթափ ված՝ անցանք ձեր նոր ուղղութեան հակա կորդների բանակը, թէկուզ Ջաւէն վարդ պետի կողմից նրանք անբարեխիղճների էլ լինէին ձգված։ Եւ այդպեսից չենք էլ ռանայ, մինչև լաւ չէք պարզի մեզ, թէ րոնք էին այն կարևոր և իմաստուն շարժա ռիթները, որ ստիպեցին ձեզ շեղվելու նախկին սկզբունքներից։

Մենք այսպէս գիտէինք, որ դուք ինքնա պաշտպանութեան գաղափարով տոգորված չէիք հրաժարվի ձեր կէտ-նպատակ պաշտպան դրօշակից։

Ապա էլ ի՞նչ պէտք է կոչել յիշատակելի հիմնադիրների աւանդած, ինքնապաշտպանու թեան նուիրված գործի շարունակութիւնը Ո՞ւմ պէտք է յանձնել թոյլերի, վաճների պաշտպանութիւնը, անօգնական վող-անարգվողների պատիւն ու կեանքը, երբ նրա անձնուրաց քաջամարտիկ-հերոսները գալիս են այսօր կուսակցականներին յատուկ ու վայել հոգով, դասակարգային նեղ շահերով ու հաշիւներով եկեղեցական, տնտեսական, դպրոցական ու մանկավարժական հարցերի մէջ միջամտելու, նրանցով զբաղվելու, ոչ միայն զբաղվելու, այլ որ ցաւալի է անհերքելի է՝ իրանց ղեկավարութեամբ ընթացք տալու, մի խօսքով տիրապետելու:

Գուցէ այն մեր գիտեցած նախնական սկզբունքները հնացած ու պառաւած լինելով՝ այժմ նորերը այդպէս են պահանջում: Մենք այնպէս գիտէինք՝ թէ ընդհանուր ժողովրդի ու ազգի իրաւունքը՝ կուսակցական բռնի ոյժի տիրապետութիւնից աւելի բարձր կը դասէիք: Մենք այնպէս էինք համոզված, թէ ցիր ու ցան ազգութեան շաղկապողը, հայի չարչարված-նահատակ եկեղեցու օգտին, գուցէ, որպէս պաշտպաններ, աւելի գերադասելի կը համարէիք նրա դարերով սրբագործված, նրա առաքելական դրօշմը կրող, սրբութիւնը առող, ինքնուրոյն, անկախ ժողովրդականութիւնը:

Քիչ էր մնում հաւատայինք, որ դուք հաստատ սկզբունքի, ազատ մտքի կողմնակից էք, ազատ համոզմունքի ու թելադրութեան բարեկամ, գիտակցական քուէարկութեան պաշտպաններ էք, սակայն, աւա՜ղ, նոր քարոզվող սկզբունքներով անգամ՝ ձեր նոր բանած զէնքը ընտրութեան գործում՝ միանգամայն հակառակը հաստատեցին:

Այս լոկ խօսքեր և անիրաւացի մեղադրութիւններ չը լինելու համար ահա փաստերը.

Դուք, որ «Պետական Դումայի» դէմ «բոյկոտ» հրատարակելով, պահանջում էինք քառաւիճան եղանակով կատարվող ընտրութիւն, այդտեղ, Բագու քաղաքում, ինչու երկ՚, երկանդամ ընտրութիւնն էլ չը յօժարեցիք պաշտպանելու: Կուրանիք, որ յամառ ձգտումներ էլ չը գործ դրվեցին խանգարելու համար:

Եկան մեղանում ծխական ժողովներ:

Եթէ այդ ոչ մի տեղ չեղաւ, երբ և ուր եղան մասնաւոր, Թաղական նախապատրաստական ժողովներ:

Ե՞րբ և որտեղ յայտարարվեցին այդ մասին, որ չը կարդացինք:

Ո՞ւր տեսաք, ո՞ւր հրաւիրեցին, որ յիմար կոյսերի պէս ուշացանք և չը ժողովեցինք:

Ո՞րտեղ կարդացին Վեհ. Կաթողիկոսի կոնդակը:

Ե՞րբ հասկացրին խնդրի, անգրագէտ ժողովրդին նրա իմաստը:

Ո՞ւր եղան մտքերի փոխանակութիւններ, թեր ու դէմ կարծիքների, առաջարկութիւնների և ցանկութիւնների շփումներ:

Ե՞րբ կայացան մեր որոշումները, մեծամասնութեան պահանջները ու մանդատները:

Հանդէս եկան յայտնի ու անյայտ ծխականների ցուցակները:

Իրաւո՞ւնք էր մարդուն իր ազատ ձայնից զրկել և ազատ ծխական տուրքով նրան բռնել ու ծանրաբեռնել:

Իրաւունք էր քահանային տուն օրհնել գիտենալ, իսկ իր ծուխի անդամների մանրամասն ցուցակ չունենալ ընտրութեան օրը:

Տասներկու ծխական քահանաներից ո՞րն էր այն մէկը, որ կատարեց իր ծխականների ընտրութիւնը և տուեց իր մի պատգամաւորը... և այլն, և այլն...

Եւ դուք ո՛չ թէ մեզ հետ չը բողոքեցիք այդպիսի խոշոր զեղծումների դէմ, այլ և մեզ բողոքողներիս էլ ձեր թշնամիներ համարեցիք, դեռ թողնենք այն, որ մի քանիսը «պրովօկատոր» անունն էլ վաստակեցին յայտնած տրտունջների պատճառով:

Երբ մօտ քառասուն հազար հայ ազգաբնակութիւնից միայն 7648 քանւոր ու գինւոր մասնակցեց, դուք դեռ արդարացրիք այդ երևոյթը մեր քաղաքական տհասութեամբ:

Թէ ազգաբնակութեան մեծ մասի բացակայութիւնը բնական երևոյթ է մեր քաղաքական խակութեան ու անտարբերութեան՝ ոչ ոք չէ հակառակում, բայց ինչու չէք ընդունում որ ոչ մի խելքը գլխին ծխականը, իր համոզման տէր քաղաքացին, իր քաղաքացիական պարտքի և իրաւունքի գիտակցող մարդը, և հաշիւներից ազատ ընտրող չէր էլ կարող անվրդով նայել քուէատուփերին և նրան շրջապատող խեղճ ու միամիտ ամբոխին: Եւ ինչպէս էիք ցանկանում, որ նրանք առանց խղճահարվելու դային իրանց տանահար եղած իրաւունքի մահացու քուէն տալու, առանց հասկանալու թէ ինչ բան է ընտրութիւն և ինչ բան «կոմեդիա»:

Յայտարարված թաւուցիկաձգութիւնը մի՞թէ դա ընտրութիւն էր և ոչ «մասխարութիւն»: Այսքա՛ն պիտի լինէր սկզբունքների անունից բոյկոտ անողների վարմունքը:

Եթէ ձեր բոյկոտին ենթարկված բիւրոկրատ կառավարութեան բոլոր ծառայողների և աստիճանաւորների համար մի որոշ գոյնի տպված պատրաստված թաւուցիկներ ցրվէին 35 բիւրոկրատ թեկնածուների ազգանուններով և ճակատին էլ օտարազգի բացականչական (!) նշաններով հարայ տային. «Աստիճանաւորներ! ձայն տուէք միապետութեան թեկնածուներին!»*) և հէնց այդ թաւուցիկները ծալելուց և տուփերի մէջ ձգելուց յետ՝ քուէատուների անունն ստանային և նրանց գիրը խաղային, միւս կողմից էլ կառավարութեան բարձրաստիճան հսկիչները քուէատուփերի «կողքը-կտրած» կանգնէին, հսկէին, ինչ կասէիք: Չէիք բողոքի մի այդպիսի ճնշման ու բռնութեան դէմ: Գաղտնի քուէարկութեան սկզբունքը խախտող, ազատ ընտրութեան դէմ ծաղր չէ՞իք համարի այդպիսի վարմունքը:

Այժմ ձեր նոյն գործողութիւնները, թոյլ տուէք հարցնել, ազատ ու գաղտնի քուէի դէմ ճնշումնե՞ր չէն, ազատ սկզբունքների դէմ նոր տեսակի բռնութիւննե՞ր չէն: Պատասխանեցէք: Անցնենք գիտակցականին:

Յայտարարեցիք, որ Բագուի, Բալախանու, Սև-Քաղաքի և Բիբի-Էյբաթի կողմից ընդհանուր ձայնատուութեան մասնակցողներ եղել են 7648 հոգի:

Եթէ քուէատուփերի մէջ ձգված 7029 կարմիր թաւուցիկներից մօտ 7 հազարը (6879) առանց մի որևէ փոփոխութեան՝ նոյն տպագրված ազգանուններով են դուրս գալիս, ինչպէս պէտք է բացատրել այս երևոյթը:

Գիտակցական ընտրութիւնը (ի հարկէ, նեղ մտքով) ում է պատկանում: Միանման պարունակութեամբ, ծալած քուէատուփը ձգված, մօտ եօթը հազար կարմիր թաւուցիկներին, թէ մասնաւոր փոփոխութիւն կրող նրանցից 150 հատ կարմիրներին:

Բայց չը վիճենք: Թողնենք այդ: Ընդունենք, որ եօթը հազարը գիտակցական ընտրութիւն է կատարել, թող այդպէս լինի: Իսկ ինչպէս է, որ 35 թեկնածուներից երկրորդ տեղը բռնող (6949 ձայնով) Բագուի յայտնի պ. Քաջազնունին ձեր թեկնածուների ժողովում սևանում է, իրան անծանօթ Շամախումն է սպիտակում՝ ընտրվում պատգամաւոր, քանի որ Բագուից ընտրված երկու պատգամաւորներից ոչ մէկը, ոչ պ. Հ. Օհանջանեան և ոչ պ. Ս. Խաչատրեան ընտրող եօթը հազարից մի-մի ձայն էլ չէին ստացել, և 35 թեկնածուների ցանկում նրանց ազգանուններն էլ չը կային:

Եթէ այս ընտրութեանը «հրաման 'ի վերուստ» անունը տալ չենք կարող, տեսնենք կարո՞ղ ենք ասել գիտակցական է:

Այժմ թող խօսի ձեր պատգամաւորների ընտրութեան մէջ ժամանակցող Դերբենդի պատուիրակը («Մշակ» № 174):

«Ի նկատի առած այն մեծ գործը, որի համար մենք հաւաքվել էինք, պատուիրակների երիտասարդ վառվռուն հասակը, տիկինների և օրիորդների այնքան ցանկալի ներկայութիւնը՝ բնական էր սպասել, որ տեղի կունենան տաք վիճաբանութիւններ. կառաջարկվեն ու կը մերժվեն ծրագիրներ, կը փոփոխակվեն թեր ու դէմ կարծիքներ, սակայն այդ ոչ մէկը տեղի չունեցաւ»:

«Ամենքը իրար ճնշված էին զգում: Մի ինչ որ աներևոյթ ոյժ, կասես, կաշկանդել էր նրանց լեզուն. դէմքերը կատարեալ սֆինքսային էին՝ սառն ու անտարբեր»:

«Եւ դա հասկանալի է. նրանք չէին եկել սեփական ուղեղով մտածելու-գործելու, իրանց խղճի թելադրութեամբ սրան կամ նրան քուէ տալու, այլ նրանք՝ Բագուի այդ 30 պատուիրակները եկել էին, որպէս ավտոմատներ մի որոշ յանձնարարութիւն կատարելու»:

«Մեզ թւում էր թէ՝ մարդկային ոգին այդ աստիճան կամազուրկ անելը անձի ազատութեան դէմ մեղանչելու սահմանից էլ մի փոքր էլ դէն է անցնում: Ո՞վ գիտէ, գուցէ այդպիսի երևոյթները բնական են Բագւում: Գուցէ այդ պահանջում են ինչ-որ կուսակցական շահեր, սակայն այդ ամենը մեր՝ գաւառացիներիս համար, որոնց վայրենի ազատութիւնը ոչ մի բռնութիւն չէ ճանաչում, մնում է առեղծուածային մի հոգեմաշ հանելուկ»:

Անշուշտ այժմ յարգելի ազատասէր պատուիրակին յայտնի է հանելուկի միտքն ու գաղտնիքը: Անտարակոյս նա այժմ գիտէ, որ գիտակցութիւնից զրկված եղել են միայն ստորին խաւերում, իսկ թէ ամեն ինչ նախապատրաստուած, նախածրագրված, չափած ու ձևած է եղել վերևում՝ այդ արդէն այժմ պարզ է:

Սակայն պարզ չէն միանգամայն, թէ ինչ սկզբունքներով էին առաջնորդված «աչքակապուկ»-ի խաղերը: Թէ վայելուչ ձևերից ինչու պիտի խուսափէիք դուք և բիւրոկրատական իշխանութեան միջոցներին դիմէիք:

Առհասարակ հոգևորականների մի մասը Թիֆլիսում և Էջմիածնում առանց ոլոր ու մոլոր ճանապարհների դիմելու իր բացարձակ պահանջը դրեց: Թէև նրանով միանգամայն առաքելական եկեղեցու կազմի վերաբերեալ իր բոբիկութիւնը հաստատեց և նրա ոգու հակառակ խորթ կղերական ձգտումներով իրան խայտառակեց, բայց և այնպէս պահանջը յայտնեց վայելուչ բողոքով:

Իսկ ինչ էր ձեր պահանջը, ինչու չը կամեցաք հանդէս բերելու: Չասէք, որ այդ մտավախութիւն էր ձեր կողմից: Իսկ ճնշումներն ու բռնադատական ձևերը բիւրոկրատ իշխանութեան վայելուչ ձգտումնե՞ր չէին, և ինչով էինք ապահովված, որ ձեր այդ բռնութիւնները չէին տանի մեզ դէպի բռնապետութիւն: Ինչով էինք երաշխաւորված, թէ ազատ ու լայն ժողովրդական եկեղեցին (որ ժողովրդի հոգևոր միութիւնն է) որին թշնամաբար խեղդում են, կամ զրկելով ազատ իրաւունքներից իրանց շահերին են ծառայեցնում պետութիւնները, և որի ամենալայն կազմին չէն հասել Եւրոպական և Ամերիկական հանրապետութիւնները, չէին զոհ գնայ ձեր անունով ընկերվարական, բայց գործով տիրապետական ջանքերին:

Ո՛չ, պարոններ, այսպիսի խաղերը վտանգաւոր են հասարակական լուրջ գործերում: Ո՛ւր, ինչ տեսակ կազմակերպութեան մէջ չեն յարգվում սկզբունքներ, իրաւունք ու պարտաւորութիւններ, ուր հերքվում են մտքի և համոզմունքի ազատութիւն, ուր գիտակցականը զոհ է բերվում բռնադատականին, ուր ազատ խօսքը չէ համապատասխանում սարկացնող խօսքին, ուր արդարն ու ճշմարիտը բռունցքի երկիւղից գլխակոր պիտի շրջին, այնտեղ գործերը եկեղեցական-ժողովրդական է, թէ աշխարհիկ-վարչական կառավարչական, դպրոցական է թէ տնտեսական, այնտեղ՝ փոխանակ վերածնելու, ծաղկելու ու բարգաւաճելու, բիւրոկրատ կառավարութեան գոյն ստանալով կը խեղաթիւրվեն, կայլասերվեն և կը մեռնեն, թողնելով փլատակների տակ և՛ եկեղեցի, և՛ ժողովուրդ, և՛ սկզբունք, և՛ ազատ իրաւունք, և՛ ձայն և ծպտուն: Ճիշդ չէ՞ ասում Հայրիկը՝ թէ նախ՝ լաւ չափեցէք և ապա՝ ձևեցէք:

Յ. Խօջամիր.

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Օգոստոսի 23-ին

Ամառն անցաւ բաւական հոգեկան զուարճութիւն պատճառելով սղնախեցիներին: Դերասաններ Իւանիձէ և Սափարով ամեն կիրակի վրացերէն ներկայացումներ են տալիս քաղաքային կլուբում: Հայ սիրողներն էլ երկու ներկայացում տուին: Խաղացին «Պատուի համար» և «Խէչոյի թուզը» պիէսաները: Երկրորդ ներկայացումը նշանակված էր վնասված շուշեցիների օգտին: Ժողովվեց բաւարար գումար:

Բայց ամենից հետաքրքիր՝ ժողովրդական ներկայացումներն են, որոնց հիմնադիր հանդիսացաւ մեր հայրենակից Աղաբէկ Սերեբրակեան: Մինչև օրս տուել են երկու ներկայացում: Առաջին անգամ խաղացին «Սօնայի նշանդրէքը», մի վրացերէն և մի ռուսերէն վօդեվիլներ, որից յետոյ տեղի ունեցաւ պաւէջու: Երկրորդ անգամ խաղացին «Խանում» վրացերէն լեզուով և հայերէն «Վայրենին»: Առաջին ներկայացման յաճախեցին մօտ 500 մարդ: Ներկայացումները տրվում են բացօդեայ, Սափարովների նախկին շինութեան ընդարձակ բակում: Տոմսակների գները 30 կոպէկից մինչև 10 կոպէկի: Ներկայացումները կը շարունակվեն մինչև ամսիս վերջը:

Որպէսզի մշտական լինեն այսպիսի ներկայացումները, մի քանի համակրողներ որոշեցին կազմակերպել «Հակալկոհոլական ընկերութիւն», որպիսին գոյութիւն ունի Թիֆլիսում: Ընկերութիւնը կը տայ պարբերաբար ժողովրդական ներկայացումներ հայերէն և վրացերէն լեզուներով, կը կազմէ ժողովրդական ընթերցանութիւններ և կը ղեկավարէ այստեղի ժողովրդական գրադարան-ընթերցարանը: Շնորհակալութիւն ենք արտայայտում պ. Ա. Սերեբրակեանին այսպիսի համակրելի նախաձեռնութեան համար և ցանկանում ենք, որ պարոնին աջակցէ ամեն մէկը, որի սրտին մօտ է ժողովրդի առաջադիմութիւնը:

Անցեալ տարվայ սեպտեմբերից Սղնախում բացվեց ժողովրդական գրադարան-ընթերցարանը, որի համար երկար ջանքեր էր թափել տեղիս երիտասարդութիւնը. Տարաբաղդաբար հասարակութիւնը սառն վերաբերվեց գրադարանին, որի պատճառով նա համարեա թէ փակվելու վրա է միջոցների սղութեան պատճառով: Զայրացած այս բանից երէկ կայացաւ ժողով, որը հեռացրեց նախկին վարչութեանը: Վարչութեան նոր անդամներ ընտրվեցին՝ օր. Ա. Գօձեան, Յ. Գրիգորեան, Գ. Տէր-Աստուածատրեան, Խաւիէվ և Մաչավարեան: Մեղադրել նախկին վարչութեանը՝ մեր կարծիքով անարդարացի է, քանի որ հասարակութիւնը սառն կը վերաբերվի և չի յաճախի գրադարան, ուստի ցանկալի է, որ ժողովուրդը կոտրի յամառութիւն և սկսէ գրադարան յաճախել մանաւանդ՝ որ գինը շատ մատչելի է: Առհասարակ սղնախեցիների մասին կարծիք է տարածված, որ մենք խաւարապաշտ, յետադէմ մարդիկ ենք՝ թշնամի առաջադիմութեան ամեն մի քայլի...

Ցարսկիէ-Կոլօդցի հայ հասարակութիւնը ցանկանում է վերաբացել հայոց դպրոցը, որի համար կամենում է հրաւիրել ուսեալ քահանայ, որը միևնոյն ժամանակ պէտք է լինի և ուսուցիչ: Քահանային կամենում են տալ տարեկան 400 րուբլի ռոճիկ ուսուցչութեան համար, բնակարան և վառելափայտ, բացի քահանայագործութիւնից ստացած եկամտից: Այստեղ ապրում են 25—30 ընտանիք հայ: Սակայն ցաւալի է, որ մի քանի անձինք համաձայն չեն, ուստի գործը դեռ ևս գլուխ չէ գալիս: Դպրոցների փակվելուց յետոյ Ցարսկիէ-Կոլօդցի հասարակութիւնը լաւ զգաց թէ ինչ կորցրեց ինքը, ուստի ներկայումս, երբ կարող ենք վերաբացել դպրոցներ, մեծ անխոհեմութիւն է փողի պատճառով տարաձայնութիւններ սարքել և դանդաղեցնել դպրոցի բացումը: Հակառակորդները պէտք է լուրջ մտածեն այս մասին...

Թիֆլիսի նախկին նահանգապետ Սվէչինի օրերով Ցարսկիէ-Կոլօդցի աւանի մօտ հիմնըվեցին երկու ռուս գաղթականների գիւղեր՝ Նիկոլաևկա և Սվէչինօ. վերջինը կրում է հիմնադրի անունը: Այս օրերս առիթ ունեցանք տեսնելու Սվէչինօ գիւղը և զարմացած մնացինք այդ գիւղի հսկայական առաջադիմութեան վրա: Գիւղը չորս տարվայ ընթացքում դարձել է մօտ 200 տուն, ունի դպրոց, գիւղական վարչութիւն, աղօթատուն, զարգացած սեփական քահանայ, նոր ձևի երկրագործական գործիքներ, հրդեհաշէջ մեքենա, ձիթա գործարան, շոգէ ջրաղաց: Մեր այցելութեան ժամանակ գիւղացիները կալսում էին ցորեն շոգէ կամնով: Գիւղացիները պարապում են երկրագործութեամբ, բանջարաբուծութեամբ, արևածաղկից ձէթ են պատրաստում, քաղցր ձմերուկ և սեխ են ցանում և էժան ծախում: Սրանցից օրինակ են առել Ցարսկիէ Կոլօդցի բնակիչները, որոնք նոյնպէս սկսել են սեխ ձմերուկ ցանել: Սվէչինօ գիւղում չը կայ ոչ մի խանութ, որովհետև գիւղացիները թոյլ չեն տալիս, նրանք առևտուր են անում Ցարսկիէ-Կոլօդցի աւանում, որը հեռու է նրանից 2 վերստով:

Վերջերս յաճախ տրվում են վէչէրներ բարեգործական նպատակով: Երեկոյթներում թոյլ է տրվում «բանկ» խաղալ, որ շատ անբարոյականացուցիչ ազդեցութիւն է ունենում խաղացողների վրա: Երևակայեցէք, որ մինչև լուսանալ խաղում են և տանուլ են տալիս բաւական գումարներ: Որչափ էլ այս երեկոյթների նպատակը վեհ լինի, այնուամենայնիւ չէ կարելի թոյլատրել, որ այսպիսով անբարոյականացնեն և սնանկացնեն ժողովրդին: Հրաւիրում ենք այս հարցի վրա վէչէրներ կազմակերպողների ուշադրութիւնը:

Ներկայումս քաղաքումս բոլոր խանութները, բացի գինետներից, փակվում են երեկոյեան ժամը 6-ին: Ցանկալի է, որ այս համակրելի կարգադրութիւնը մշտական լինի:

Թելաւի գաւառի Ղվարելի գիւղին մեծ դժբաղդութիւն է պատահել: Այս գիւղի վերև հոսում է գետակ, որ մի տեղ լճանում է: Այս օրերս ջուրը պատռում է ափը և հեղեղում է Ղվարելի գիւղը: Մարդկանց և տներին մեծ վնաս է հասցնում:

N. N.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Օգոստոսի 28-ին

«Մշակի» № 137-ում գրած էի մեր քաղաքի ստարօստայի և իր օգնականի ընտրութիւնների մասին, որ քաղաքային վարչութեան անդամները կայացնելով՝ ներկայացրել էին Երևանի պ. նահանգապետին ի հաստատութիւն: Ինչպէս յայտնի է ընթերցողներին, նորընտիրներ այդ պաշտօնների համար էին պ. պ. Յ. Իւսուֆեան և Կ. Տէր-Սահակեան, որոնց հաստատմանը «սրտատրոփ» սպասում էր մեր քաղաքացիների մեծամասնութիւնը: Սակայն մօտ երկու ամիս սպասելուց յետոյ՝ անցեալներում թուղթ ստացվեց Երևանի նահանգական վարչութիւնից, որը մի քանի թերութիւնների պատճառով անվաւեր համարելով բեկել է ընտրութիւնը, Այդ առիթով, օգոստոսի 20-ի քաղաքային վարչութեան հերթական նիստում, ի միջի այլ հարցերի, ստարօստա Արծրունին զեկուցեց ժողովին, որը լսելով ընտրութիւնը բեկանելու մասին, նշանակեց սեպտեմբերի 20-ին նոր ընտրութիւն կայացնել՝ թէ քաղաքային աւագի և թէ նրա օգնականի համար:

Անշուշտ հետաքրքրվողներ կը լինեն ընտրութիւնները անվաւեր ճանաչելու մասին: Բացատրենք երկու խօսքով:—Պ. Յ. Իւսուֆեանցի ընտրութիւնը բեկանելու պատճառը կայանում է նրանում, որ նա մեր քաղաքում սեփական կալուածք չունենալով՝ զուրկ է եղել կալուածական ցենզից և չը նայելով, որ նա ընտրողական ցենզը ձեռք էր բերել տեղական մի որբ ընտանիքից և ունեցել է այդ ընտանիքի հոգաբարձուաց ընդհանուր հաւատարմաթուղթ նօտարական ձևով, սակայն օրէնքով (Стат. 24 гор. положенія 1892 г. и ст. 37 инструк. по орган. город. упрощ. управл.) այդ ձևը իրաւունք չէ տալիս քաղաքային աւագ լինելու համար, հետևապէս ընտրութիւնը իբրև «ոչ սեփական-կալուածականին ցենզաւորի», անվաւեր է ճանաչվել:

Գալով պ. Կ. Տէր-Սահակեանցի ընտրութեան՝ կասենք որ նրա բեկանելու պատճառը մի փոքր թիւրիմացութիւն է եղել, այն, որ նա իր ընտրութիւնների վրա հսկելու նախագահութիւնից հրաժարվելով, առաջարկեց ժողովին ընտրել մի ուրիշ նախագահ, յատկապէս նրա համար, որ ինքը նոյնպէս տուփ է գնելու, ըստ որում նա իր տուփի վրա կանոնով չէր կարող հսկել կամ նախագահել, ուստի ժողովը նոյն րոպէին ընտրելով ձայնաւորներից նախագահի պաշտօնի համար պ. Գ. Բուդումեանցին՝ նոյն րոպէին և եթ կայացրեց օգնականի ընտրութիւնը: Մինչդեռ կանոնով նախ պէտք էր նոր նախագահը նահանգապետի կողմից հաստատվէր (ст. 36 инстр. по орган. город. упрощ. управ. и ст. 120 город. положенія) և ապա ընտրութիւնը կայացնվէր: Ուստի այդ թիւրիմացութեան շնորհիւ անվաւեր ճանաչվել է նաև օգնականի ընտրութիւնը:

Սեպտեմբերի 20-ին ընտրութիւնների վրա նախագահելու համար քաղաքային աւագ պ. Արծրունին յայտնելով, որ թէև օրէնքով ինքը կարող է նախագահել, բայց չը կամենալով բռնանալ ժողովի գործունէութեան վրա, առաջարկեց ձայնաւորների յօժարութեամբ ընտրել մի նախագահ: Քուէարկվեցին պ. պ. Գ. Արծրունի և Կ. Տէր-Սահակեանց, որոնք հաւասար (6—6) ձայներ ստացան. ստարօստա Արծրունին յայտնեց, որ կանոնի համաձայն ինքը կը նախագահէ: Պէտք է յիշել, սակայն, որ մեր դումայի ձայնաւորները, որովհետև երկու կուսակցութիւնների են բաժանված, այդ պատճառով մի կուսակցութիւնը հակառակ է այդ հանգամանքին: Բայց լաւ կանէին մեր ձայնաւորները, որ գործէին համերաշխ կերպով, մի կողմ թողնելով եսականութիւնը, որ վայել չէ մի ինտելիգենտ դասակարգի: Աւելացնենք և այն, որ լսելով ընտրութիւնների բեկվելու լուրը, մեր քաղաքացիների մեծամասնութիւնը դարձեալ տարտամ դրութեան մէջ ընկաւ, թէ արդեօք այս անգամ ում պէտք է ընտրել: Դա, իրաւ որ դժուար «մասլահաթ» է, մանաւանդ մեր պեսսիմիստների համար, որոնք լուրից ուղտ են շինում և այլայլում հասարակութեան տրամադրութիւնը:

Գ. Սինանեան

ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ

(Նամակ Խմբագրութեան *)

Թիֆլիս, յուլիսի 27-ին

«Մշակի» № 160-ում «Մի փրկարար միջոցի առիթով» վերնագիր ունեցող պ. Պ. Զ. յօդուածով զրպարտութիւն է անում, ասելով, որ ես առաջարկել եմ «Մշակի» № 109-ում հիմնել «Կալուածատիրական բանկ»: Եւ այդ առիթով պ. Պ. Զ. դատողութիւններ է անում, նոյնիսկ յանգում բարեգործութեան սկզբունքին, որ հարուստները եթէ մի 3—5 հազար էլ տան, գործը գլուխ կը գայ իր ծրագրով:

Որովհետև «Մշակի» № 109-ի մէջ արած իմ առաջարկս է հիմնել «Ղարաբաղի հողային վարկի փոխադարձ ընկերութիւն» և ոչ թէ «Կալուածատիրական բանկ», ուստի ինձ անհասկանալի է, թէ պ. Պ. Զ. ինչ շարժառիթներից դրդված աղաւաղում է իմ առաջարկը և զրպարտութիւն անում:

Կարդացէք «Մշակ» № 109 և ցոյց տուէք այնտեղ «Կալուածատիրական բանկ» խօսքը:

1) Յօդուածագիրը ինձ յատկացնում է «այն տիպի մարդկանց, որոնց մէջ զգացմունքը գերակշռում է դատողութեանը»: Եթէ պ. Պ. Զ. այդ յօդուածը գրել է միայն իր այդ դիագնօզը իմ մասին յայտնելու համար, դրա մասին ոչինչ չունեմ ասելու: Այո, ես զգացմունքի մարդ եմ, բէչալական, մատերիալիստական աշխարհը հոգւոյս բոլոր ուժով ձգտում եմ դարձնել իդէալական աշխարհ: Այս նպատակիս հասնելու համար ծրագիրներ ունեմ, բայց մատերիալիստական աշխարհը իր ինքնապաշտպանութեան համար իմ ծրագիրները խորտակում է եսական, իր կաշուի և գրպանի ոյժով. զրպարտութիւններով և բռնութիւնով:

2) Ինձ համար այն «մութ է պետական հողային բանկի նշանակութիւնը», որ գտնվում է պ. Պ. Զ-ի նման դատողների ձեռքին, բայց բաւականաչափ պարզ և որոշ է փոխադարձ վարկի ընկերութիւնների նշանակութիւնը, որոնք հիմնվում են ժողովրդի ձեռքով և ժողովրդի համար, մինչդեռ «պետական, կալուածատիրական բանկը» հիմնվում է պետութեան ձեռքով բիւրոկրատների և կալուածատէրերի համար:

3) Ժամանակակից բարեգործութիւնը, որ պետութիւնների, իշխողների, կեղեքիչների, բուրժուաների հնարած սպանդանոցներ են, իմ համոզմունքով, և մարդկային արժանապատուութիւնը նսեմացնող ֆակտորներ, չը պէտք է հերոս Ղարաբաղի վերաշինութեանը նպաստեն:

Կրկնում եմ կենդանի է Ղարաբաղը և անհուն նրա հարստութիւնը ու «Ղարաբաղի հողային վարկի փոխադարձ ընկերութիւնը» և նման հաստատութիւններ կարող են դրախտ դարձնել այսօր արիւնաթաւալ Ղարաբաղը:

Վաղաժամ է ամեն ինչ լրագրում տպագրել, բայց յոռետեսներին հարկադրված եմ ասել, որ կան լուրջ առաջարկներ, Ղարաբաղի կուրորտներն էլ կանօնաւորելու, հանքերն էլ շահագործելու. երկաթուղին էլ կառուցանելու են:

Շուէյցարիայի կուրորտները իրանց այժմեան բարձրութեան հասցնող, այս ասպարէզում շատ յայտնի եղբարք Hauser-ները ինձ վաղուց յայտնել էին ցանկութիւն մեր երկրում (Յակոբայ վանքում, Թթու ջրում և այլն) հիմնել կուրորտներ: Տիեզերահռչակ բժշկապ. Հագուէն քիչ էր մնացել մի քանի տարի առաջ ձմեռը մեր երկիրը գար՝ Շուշին ուսումնասիրելու և նշանաւոր Վէյսենբուրգի կուրորտի դիրեկտորներից մէկը տրամադրութիւն էր յայտնում նոյնիսկ մեր երկրում հաստատվելու և ճիւղաւորելու կուրորտների գործը:

Հանքերը, անտառները շահագործելու համար Եւրոպայում, Անգլիայում, Բելգիայում, Հոլանդում ինձ շատ առաջարկներ են եղել, բայց ինչ արած, որ մենք հայերս ագահ ենք...

Քանի տարի առաջ Գանձակում հայերը ժողով ունեցան իմ ներկայութեամբ այնտեղի նաւթային հողերը շահագործելու համար: Տեղեկացէք, ինչ հրապուրիչ առաջարկ էր իմ արածս և քանի-քանի միլիոն րուբլի մինչև այժմս շահած կը լինէին գանձակեցիները, բայց մարդկային ագահութիւնը և հայի անմիաբանութիւնը զրկեց նրանց, իմ միջոցով Եւրոպայից արած, ամենաընդարձակ և շատ օգտակար ձեռնարկութիւնից:

Հարցրէք Թիֆլիսում յայտնի պ. Բագրատ Եարալեանից (միջնորդ). նա բերել էր Ղազախում հանք ունեցող մի հայ քահանայի, մի Արեշեանի և մի ինժեներ Գրինի ու ինչպիսի պայմաններով դարձեալ ես այդ հանքը յանձնում էի եւրոպական ֆիրմայի շահագործելու, սակայն, երբ մեծաքանակ աւանսը հեռագրով ստացած և նշանակած ժամին նօտար Մղերովի մօտ սպասում էի նրանց, այդ ընկերները մէկը միւսի վրա մեղ գցելով, խոստմնազանց եղան, ագահութիւն արին, դրժեցին իրանց պայմանը և փախան:

Տեղեկացէք Բագւում «Բիբի-Հէյբաթ ընկ.» գրասենեակում, թէ քանի տեսակ առաջարկներ են եղել իմ միջոցով միլիոններ բերելու այնտեղ, միայն թէ այն միլիոններ տուողներից լինի և մէկը գործի մէջ: Եւ պ. Աւագեան Կոլմանեանի նման մարդիկ դիմադրեցին այդ տեսակ առաջարկների, չը թոյլատրելով, որ գէթ մի այլազգի (հոլանդացի) դիրեկտորներից մէկը լինի, թէև նա միլիոններ մտցնէր, մինչև կոկորդը պարտքի մէջ այն ժամանակ խեղդվող, մի ընկերութեան մէջ:

Ապա մի ուրիշ առաջարկ՝ Կասպից ծովում միանգամից մի քանի տասնեակ շոգենաւ ունենալ և ամբողջ Պարսկաստանի արդիւնաբերութեանը տիրանալ:

Սակայն, քանի քանի այդ տեսակ առաջարկներ են եղել Եւրոպայից միայն իմ միջոցով:

Այո, սգաւոր Ղարաբաղը Աւետեաց երկիր կը լինի, եթէ նրա զաւակները զէն շպրտեն կոկարդն ու իրանց «բիւրօ»-ներին (կանցելարիա) մնաս բարև ասեն...

Մանաւանդ, երբէք զրպարտութիւն չանեն, չաղաւաղեն ուրիշի միտքը:

Տ. Նազարեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 1-ին

Այս տարվայ օգոստոսի 12-ին հեռագրական գործակալութիւնը, Պետերբուրգի «Надежда» ընկերութեան գործերի դրութեան մասին ամենուրեք սխալ լուրեր հրատարակեց: Ընկերութիւնը և՛ ոչ մի դէֆիցիտ չէ ունեցել, որովհետև նրա ստացուածքն ու գոյքը աւելի շատ են քան նրա պարտականութիւնները: Ընկերութեան ֆինանսական դրութիւնը պարզելու համար, մասնաժողով գոյութիւն չունի. հարկաւորութիւն կայ միայն քննել սովորական կարգով, ընկերութեան վարչութեան՝ մի քանի տարիների նկատմամբ արած միջնորդութիւնները Պետական բանկի խորհրդում Վարկային գիւանատանը: Ապահովագրական և փոխադրական գործերը առանձնացնելու հարցը Վարչութիւնը յարուցել է ընկերութեան գործերը ամրապնդելու և զարգացնելու նպատակով, ոչ թէ նրանց վերջ դնելու համար:

Ընկերութեան վարչութեան նախագահի յանձնարարութեամբ պատիւ ունիմ խնդրել Ձեզ՝ Ձեր խմբագրվող լրագրի էջերում զետեղել սոյն հերքումը:

Անդրկովկասի գլխաւոր գործակալ և ընկերութեան Թիֆլիսի գրասենեակի կառավարիչ՝

Ս. Խ. Սուլխանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիս քաղաքի և Թիֆլիսի նահանգի ժամանակաւոր գեներալ-նահանգապետ Տիմոֆեէվը առաջարկել է Թիֆլիսի նահանգապետին՝ հրամայել կազմել Գօրու գաւառում սկզբում գոյութիւն ունեցող մասնաժողովի նման մի մասնաժողով, որ որոշէ գիւղացիներից՝ յօգուտ կալուածատէրերի վերցնվելիք կապալառուական փողերի և չալթուկի չափը: Մի ուրիշ գրութեամբ էլ գեներալ-նահանգապետը պատուիրել է Գօրու գաւառապետին՝ անմիջապէս պահանջել յիշեալ գաւառի գիւղացիներից, որ վճարեն կալուածատէրերի օգտին սահմանած տուրքերը:

«Իրշադ»-ում տպված է «Դարձեալ կոզակների մասին բողոք» վերնագրով հետևեալը. «Երէկ մեր խմբագրատունը եկան Բագուի բնակիչներից չորս հոգի և խնդրեցին տպել մի այսպիսի լուր. «Երէկ գիշեր, ժամի 11-ին, չորս հոգի կառք նստած՝ անցնում էինք Բալախանսկի փողոցով. երբ Մարինսկի փողոցի անկիւնը հասանք, Խապեօրների գնդի կոզակներից 7 հոգի կառքը կանգնեցրին: Մեր ընկերներից մէկը ըստ եւրոպականի հագնված և գլխին ռուսական գլխարկ ծածկած լինելուն պատճառով՝ առաջ նրան մի կողմ կանչեցին և ասացին. «դու ինչ ազգից ես». մեր ընկերը բանը հասկանալով՝ այսպիսի պատասխան է տալիս. «Ես հայ եմ, և ինքս էլ կոմիտետի անդամ եմ»: Կազակները այդ լսելով ասում են. «Դու էլ մեզանից ես. քեզ հետ գործ չունենք՝ եթէ քո մօտ զէնք էլ գտնվի, քեզ չենք դիպչելու. բայց ասա մեզ թէ այն մահմեդականները, որ քեզ հետ են, որքան փող ունեն ընդամենը»: Ռուսական գլխարկ ծածկած ընկերը չէ համաձայնվում կոզակների առաջարկին. բայց կոզակները նախ նրան մի քիչ խնդրում են, սակայն յետոյ իրանց աչքերը չռում են և դիմում են նրա միւս ընկերներին: Սրանցից խլում են մի չուգունէ ժամացոյց ոսկի շղթայով և եօթ ու կէս րուբլի փող. այնուհետև մտնում են պարսկահպատակ մաշադի Բեգա անունով մի հացագործի խանութ: Այդ ժամանակ մենք կառք նստելով՝ Մարինսկի փողոցից գնացինք Կիրպիչնի փողոց (ուր պահակներ շատ են լինում) բողոքելու համար: Նոյն փողոցում հանդիպեցինք (ինչպէս յետոյ յայտնի եղաւ) IV ոստիկանատան օկոլօդօչնի Դիմիտրիեվին, որ գնում էր Դերբենդից եկած, ազգը անծանօթ, մի պրիստաւի հետ: Մենք սրանց տեսնելով՝ աղաչեցինք, որպէս զի բարեհաճեն գալ մեզ հետ և կոզակներից ետ վերցնեն մեզանից խլված իրերը: Նրանք հաւանելով՝ եկան և նոյն հացագործի խանութում տեսան կոզակներին: Շատ երկար խօսեցին կոզակների հետ. վերջ ի վերջոյ մենք միայն այն կասենք, որ օկոլօդօչնին հրամայեց մեզ թալանող կոզակներին տանել մեզ ոստիկանատուն: Այսպէս հրամայելուց յետոյ, օկոլօդօչնին իր ընկերոջ հետ հեռացաւ: Կոզակները այդ լսելով՝ դեռ ևս օկոլօդօչնիների ներկայութեան՝ իրանց յատուկ բառերով մեզ հայհոյեցին և իրանց ճանապարհին գնացին: Որքան որ էլ մենք այդ մասին իսկոյն դիմելով III ոստիկանատուն, հերթապահ օկոլօդօչնի Կուխարին գանգատվեցինք, օկոլօդօչնին իր պաշտած տեղից չը շարժվելով անգամ, ասաց հետևեալը. «Ես ինքս էլ այստեղ մենակ եմ այժմ. ես ոչինչ չեմ կարող անել»: Այս մասին մի խնդրագիր պատրաստելով՝ ոստիկանապետի միջոցով ներկայացված է գեներալ-նահանգապետին:

Յ. Գօգիբաշվիլու խմբագրութեամբ հրատարակվող «Իվերիա» շաբաթաթերթը դադարեցրած է անորոշ ժամանակով:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ արդէն մշակված է դասաւանդման ազատութեան վերաբերեալ մի նախագիծ, որ մօտ օրերս յանձնված է մինիստրների խորհրդին: Այդ նախագծի համաձայն դասաւանդելու իրաւունքը կախված կը լինի սոսկ կրթական ցենզից:

Հայր Իօն Բրիլխնչէվի գործը քննվելու է Թիֆլիսի դատաստանական պալատում սեպտ. 6-ին: Մեղադրվողին, որպէս «Встань Спящій»-ի նախկին խմբագրի, մեղադրական ակտը ներկայացրած է քրէական պատժագրքի 103 և 128-րդ յօդուածների համաձայն—յիշեալ հրատարակութեան № 3-ում զետեղած «Դումա» յօդուածի համար: Պաշտպանելու են Կլանկ և Կանչէլի երդուեալ հաւատարմատարները:

Ստացանք «Յառաջ»-ի գրադարանի հետևեալ գրքերը. 1) Ա. Վ. Պեշէխոնովի «Հաց, Լոյս և Ազատութիւն» Թարգ. Խ. Կարճ. գինն է 12 կոպ.. 2) Ս. Ֆեդորովիչի «Ժողովրդական փողերը ինչպէս են հաւաքվում և ինչի վրա են ծախսվում». Թարգմ. ռուսերէնից, գինն է 5 կոպէկ. 3) Կարմելիկի «Նոր լերան քարոզը». Թարգ. ռուսերէնից. Տ. Յ. գինն է 2 կոպէկ. 4) Վ. Չերնովի «Գիւղացին և բանւորը որպէս տնտեսական կատեգորիաներ». Թարգ. ռուսերէնից, Լ. Ն.-ի, գինն է 15 կոպ. 5) Պերներստոֆերի «Ազգային հարցը և Սօցիալ-Դեմօկրատիան» Թարգմ. ռուսերէնից Դ. Պ.-ի, գինն է 5 կոպէկ. 6) Կ. Պրամզօլինի «Գիւղացիներին» Թարգմ. տիկ. Հրանույշի, գինն է 5 կոպէկ. 7) Ե. Թոփչեանի «Արհեստակցական Միութիւններ», գինն է 15 կոպէկ. 8) Ի. Նովոտորժսկի. «Ի՞նչ է իրաւական պետութիւնը» Թարգմ. Ա. Ար.-ի, գինն է 15 կոպէկ. 9) Ն. Կարեանովի «Հողային հարցը Նոր Զելանդիայում». Թարգմ. օր. Հ. Տ.-ի, գինն է 2 կոպէկ. 10) Ժան Ժորէսի «Բուրժուական սեփականութիւն և նրա ապագայ գրաւումը», Թարգմ. Ս. Շխ.-ի գինն է 5 կոպէկ:

Քաղաքային տարրական դպրոցներում պարապմունքները կը սկսվեն սեպտեմբերի 5-ից կանուխ:

Սեպտեմբերի 1-ից դատարանային, ադմինիստրատիւ և պետական բոլոր հաստատութիւններում պարապմունքները տեղի են ունենում ձմեռվայ կանոններով:

Օգոստոսի 30-ին, գործազուրկների գործը աւարտելու մասին խորհրդակցելու համար կայացաւ Թիֆլիսի քաղաքային վարչութեան խորհրդի, ֆինանսական մասնաժողովի, ձայնաւոր տեխնիկների և փողոցները քարկելու գործի մասնաժողովի անդամների միացեալ նիստը, որին մասնակցում էին նաև գործազուրկների ներկայացուցիչներից 7 հոգի: Որոշվել է աստիճանաբար վերջ դնել աշխատանքներին և գործազուրկների գործերի աւարտման (վերջ դնման—ликвидація) ամբողջ գործը վերջացնել մինչև սեպտ. 25-ը:

Բագուի սօցիալ-դեմօկրատ կուսակցութիւնը հրատարակել է մի կոչ, որով մեղադրում է տեղական Դաշնակցական մարմինը այն բանում, որ նա իր ընդունած բռնի և ճնշող միջոցներով անյաջողութեան է մատնել Բագուի վերջին քաղաքական ընդհանուր գործադուլը:

Բագուի ճաշարանների և հիւրանոցների խոհարարներն ու ծառայողները տնտեսական հիմքերի վրա յայտարարել էին ընդհանուր գործադուլ: Ճաշարանատէրերն ու հիւրանոցատէրերը ընդունելով գործադուլ անողների պահանջները, վերջ էին դրել գործադուլին: Մի քանի ճաշարանատէրեր և հիւրանոցատէրեր չընդունելով պահանջները՝ արձակել էին, սակայն իրանց ծառայողներին: Դրա վրա արձակված ծառայողները լրագիրների միջոցով և առանձին կոչերով հրաւիրել էին քաղաքացիներին բօյկոտ հրատարակել յիշեալ ճաշարանների և հիւրանոցների դէմ: Բօյկոտի ենթարկված այդ ճաշարանների շարքում գտնվում էր և Հասարակական Կլուբի բուֆէտչիկը: Հասարակութիւնից մասնաւորապէս խնդրված էր չը ճաշել կլուբի բուֆէտում: Սակայն կլուբ յաճախողները չը յարգելով գործադուլ անողների խնդիրքը շարունակում էին ճաշել և ընթրել: Մի երկու օր սրանից առաջ նոյն կլուբում բազմաթիւ անձինք ճաշելիս, յանկարծ վերևից ընկաւ մի շիշ և կոտրվելով սրահը լցրեց գարշելի հողով: Ծաղրողները հոտից ստիպվեցին փախչել:

---

*) Փոխանակ գրելու. (Աստիճանաւորներ, Ձայն տուէք...)

*) Այս նամակը վաղուց ստացված է, բայց խմբագրութիւնը յետաձգել էր նրա տպագրութիւնը: Խմբ.

—

Անցեալ օր, Բագւում պարսից հիւպատոս Միրզա Ալի Մէհմէդ խանի նախագահութեամբ կայացաւ «Պարսկաստանցիների Բարեգործական Ժողովը»: Ժողովի անդամներից մի քանիսը ցանկանում էին, որ այդ ժողովը փակվի և ընդհանուր քուէարկութեամբ ամբողջ ազգի կողմից նոր անդամներ ընտրվեն: Հիւպատոսը ձայների մեծամասնութեամբ այն վճիռը կայացրեց, որ այդ ժողովի բարեգործական մի ակտը հանդիսացող «Իթթիհատ» դպրոցը բացվի և այնուհետև նորից ընդհանուր ժողով գումարվելով նոր ընտրութիւններ կատարվեն: Մինչև դպրոցի բացումը ժողովը շարունակէ իր գործունէութիւնը: Ժողովի վերջում հիւպատոսը մի ընդարձակ ճառ արտասանեց, ժողովի հիմնարկած այլ բարեգործական գործերը աւելի ընդլայնելու և զարգացնելու, ինչպէս և ժողովի անդամներին քաջալերելու համար: Յետոյ արտայայտեց իր մեծ ուրախութիւնը կատարված գործերի համար և իր պատրաստակամութիւնը յայտնեց ազգի կրթութեան և բարենորոգման գործին ծառայելու: Ապա ժողովի ընտրութեան մասին խօսելով ասաց, որ պէտք է այդ ժողովին ընտրել և բանւորների ներկայացուցիչներից: Շուտով կը կայանայ «Իթթիհատ» դպրոցի բացումը:

—

Յայտնի է, որ Թիֆլիսի բաղնիսների ծառայողները գործադուլ անելով 14 կէտերից պահանջներ էին առաջարկել իրանց տէրերին: Այդ կէտերից 13-ը ընդունվել են, իսկ մէկը, առաջինը, ոչ: Գործը մինչև դատարանի յանձնելով վերջինս կարողացել է առայժմ բաւարարութիւն տալ Օրբելեանու և Իրակլու բաղնիսների ծառայողներին, որոնցից առաջինը վճարել է ամբողջ հասանելի դրամի 60 տոկոսը, իսկ երկրորդը 50. դրանից յետոյ յիշեալ բաղնիքներում գործադուլը վերացրված է համարում: Միւս բաղնիքների տէրերի հետ բանակցութիւնը դեռ շարունակվում է և մինչև բաւարարութիւն չը ստանան նրանց ծառայողները, գործադուլը կը շարունակվի:

—

Ի պատիւ Դումայի կազմած (անգլիացիների ձեռքով) և հոկտեմբերի վերջերին Պետերբուրգում Միւրոմցեվին ներկայացրվելիք ուղերձը ստորագրել են շատ պէրեր, պարլամենտի անդամներից 200 աւելի անձինք, անգլիական 50 եպիսկոպոսներ, ուրիշ եկեղեցիների 18 քահանաներ, 35 պրոֆէսորներ, 70 նկարիչներ, 24 խմբագիրներ, 40 մէրեր և արհեստակցական դաշնակցութիւնների 150 ներկայացուցիչներ:

—

Օգոստոսի 29-ին Թիֆլիսի «Կրուժոկի» անդամների ընդհանուր ժողովում, ձայների առաւելութեամբ՝ 60-ով ընդդէմ 20-ի վճռված է վերացնել «լոտօ»-ն, որովհետև այդ խաղը ընդունում է կորստաբեր և վնասակար բնաւորութիւն:

—

Պետերբուրգի բարձր ազատ ուսումնարանին կից հաստատված է հրէական պատմութեան ամբիոն: Իբրև դասախօս հրաւիրված է Վիլնայում ապրող հրէա պատմաբան Դուբնովը: «Сегодня»

—

Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ, այն հաստատութիւնները, որոնք անցագիրներ են տալիս, պարտաւոր են, առանց պահանջելու որպէս զի հները վերադարձնեն, ուղարկել նորերը խնդրողներին: Այդպիսի դէպքերում անցագիրները տալիս են ոստիկանական կամ համայնական վարչութիւնների միջոցով, որոնք անցագիրները տալիս կարող են նախապէս յետ պահանջել անցագիրները և կամ թէ ստորագրութիւն վերցնել, որ նրանք չունեն կամ կորցրել են անցագիրը:

—

Կառավարչական վերջին հաղորդագրութիւնից յետոյ Պարիզի բորսայի գները զգալի կերպով սկսել էին ամրապնդվել ու բարձրանալ ռուսաց արժէթղթերի գները: Բայց, երբ հեռագրները հաղորդեցին զինւորական—դաշտային դատարաններ մտցնելու մասին, յանկարծակի սկսվեց զօրեղ ռեակցիան և ամեն տեղ գները ընկան: Նոյնանման երևոյթ տեղի է ունեցել և Բեռլինում, այն տարբերութեամբ միայն, որ վերջինումս գները աւելի էին իջել: Այդ բոլորը խիստ ներգործութիւն ունեցաւ և Մոսկվայի բորսայի վրա, ուր ընդհանուր առմամբ, գները իջած դրութեան մէջ են:

—

«Страна» լրագիրը հաղորդում է, որ գաւառական մամուլի վերաբերմամբ, մամուլի գործերի վարչութեան գլխաւոր կառավարչի խորհրդով, կարգադրութիւններ անելու ամբողջ իշխանութիւնը նորից վերապահված է գեներալ-նահանգապետների և նահանգապետների անմիջական բարեհայեցողութեանը:

Օգոստոսի 26-ին վերջացել է Պետերբուրգի համալսարանում ուսանողների ընդունելութիւնը: Խնդրատուներ ընդամենը եղել են 4000 հոգի, որոնցից կանայք 70 հոգուց աւելի: Ընդունված են 2,600 հոգի իսկական ուսանողներ: Ազատ ունկնդիրներ կընդունվին այն բէչլիստները, որոնք լատիներէն լեզուից քննութիւն չեն տուել. «Страна.»

Կովկասի փոխարքայութեան դիւանատունը ուղարկել է երկրի զանազան կառավարչական հիմնարկութիւններին, Պետական Դուման արձակելու մանիֆեստից 12 հազար օրինակ և գլխաւոր մինիստր Պ. Ա. Ստոլիպինի՝ անիշխանականութեան երևալու դէմ կռուելու առթիվ հրատարակած հեռագիրները ազգաբնակութեան մէջ տարածելու համար:

—

Գործազուրկների թւում սանիտարական թերթիկներ կազմող և ազգաբնակութիւնը ցուցակագրող ուսանողներին, քաղաքային վարչութիւնը, բացի վաստակած գումարներից տալիս է 20-ական րուբլի համալսարան գնալու ճանապարհածախս:

—

Գաղթականական հոսանքից յետոյ, ուսանողական հոսանքը: «Իրշադ»-ին Կ. Պոլսից ուղարկված մի մասնաւոր թղթակցութիւն, նկարագրելուց յետոյ թէ ինչ շքով տօնվել է Սուլթան Համիդի գահակալութեան տարեդարձը, և թէ որքան առաջացել է Հիջազի երկաթուղին, շարունակում է. «Ուսում ստանալու համար Բագւի մահմեդականների ուղարկած անձը Կ. Պոլիս հասաւ: Այժմ Կովկասից եօթ հոգի են սրանում: Չորսը՝ Կ. Պոլսում, երեքն էլ Բէյրութում զբաղված են ուսմունքը կատարելագործելով. Սրանցից հինգը Բագւից, մէկը՝ Նախիջևանից և մէկն էլ Գանձակից ուղարկված են: Բացի դրանից Նուխուց, Թեմուր-Խան-Շուրայից և Կովկասի ուրիշ կէտերից բաւական թւով աշակերտներ կան: Սակայն սրանք իրանց գլխին փաթթոցներ կապելով մեդրէսէներն և բարեգործական հիմնարկութիւններն են մտել. չեն ուզում լոյս աշխարհ դուրս գալ: Թէև համալսարանում նուխեցի մի քանի ուսանողներ կան, բայց դրանք էլ շարիաթի ուսմունքները աւանդվող բաժնում են գրվել: Ներքին Ռուսաստանից աշակերտներ էլ շատ կան: Ուսումնարաններում շարունակող և մասնաւոր աշխատողների թիւը հասնում է քառասունհինգի: Մեդրէսէների (կրօնական դպրոց) աշակերտների թիւը աւելի շատ է: Երէկ Կ. Պոլսում ուսում ստացող Ներքին-Ռուսաստանցի և Կովկասցի ուսանողների կողմից, երկու կազանցի և մէկ կովկասցի աշակերտներ վխեմ. Իլդըզի փաշայի միջոցով շնորհաւորեցին Ն. Վեհ. Սուլթանի գահակալութեան տարեդարձը հեռագրով: Հեռագրի պատճէնը կը հաղորդեմ յաջորդ պօստով:»

Սեպտեմբերին լոյս կը տեսնէ ժողովրդասօցիալիստական մի նոր շաբաթաթերթ, որին մասնակցելու են աչքի ընկնող գրական ոյժերից շատերը:

—

«Times»-ը հաղորդում է, որ Պետերբուրգում խորհում էին ոչ թէ մի առանձին անհատի դիկտատուրայի մասին, այլ աշխատում էին մտցնել այնպիսին, որ կենտրոնանար մի խումբ անձանց ձեռքում, որին մասնակցելու է ինչպէս պրեմիեր-մինիստրը, այնպէս և մինիստրների ամբողջ խորհուրդը: Լրագիրների հաւաստացնելով այդ նախագծի պաշտպան է և պ. Ստոլիպինը: («Р. Бог.»).

—

Զքաւորութեան վերջին դուռն հասած մի ընտանիք, որ բաղկացած է թոքախտով հիւանդ 2 ծերունի կնոջից և 3 մանր որբերից (աշխատող տղամարդ ձեռքը վաղուց վախճանված է) կարօտ է բարերար անձանց օգնութեան և կարեկցութեան: Ցանկալի է, որ որդեգրեն մեծ 7-ամեայ աղջկան: Ընտանիքը օրերով նոյն իսկ քաղցած է մնում: Նպաստները կարելի է ուղարկել և խմբագրութեանս հասցէով:

—

«Бирж. Вѣд.» լրագրի աշխատակիցը խօսակցութիւն է ունեցել դատաստանական պալատի դատախազ Կամիշանսկու հետ Պետական Դումայի նախկին պատգամաւորներին դատաստանական պատասխանատուութեան ենթարկելու մասին: Աշխատակցի հարցին մօտաւորապէս յայտնել թէ որքան ժամանակվայ ընթացքում պէտք է վերջանայ քննութիւնը և ապա յանձնվի դատարանին, Կամիշանսկին պատասխանել է. «Ես չեմ կարող պատասխանել այդ հարցին մի շատ հասարակ պատճառով. մենք ինքներս էլ չը գիտենք թէ երբ է վերջանալու այդ գործի քննութիւնը և ահա թէ ինչու. ինչպէս յայտնի է գործը ես սկսել եմ յուլիսի 15-ից: Յուլիսի 24-ին ես դիմեցի պետական դիւանին և խնդրեցի հաղորդել Դումայի նախկին պատգամաւորների հասցէները, և շուտով էլ ստացայ պատասխանը: Բայց և այնպէս այդ պատասխանը ինձ շատ քիչ օգնեց. որովհետև պատասխանատուութեան ենթարկված 180 հոգուց, պետական դիւանին յայտնի է միայն 40 հոգու հասցէն: Պէտք է նկատել, որ այդ յայտնի հասցէներն էլ մեծ մասը Պետերբուրգի մասին է և ի հարկէ, ներկայումս դրանք ոչ մի արժէք չունեն: Ես անձամբ միջոցներ եմ ձեռք առել շտապեցնելու այդ գործերի քննութիւնը: Առաջիկայ շաբաթ կըսկսեն պահանջները ուղարկել քննութիւնների մասին»:—«Այնպէս որ երկար պէտք է սպասել գործի քննութեանը», հարցրել է թղթակիցը: «Ես կարծում եմ, որ այսպիսի պայմաններում 6 ամսից վաղ անկարելի է վերջացնել: Այդ բոլորը կարող էր կատարվել աւելի շուտով, եթէ որ յայտնի լինէին պատգամաւորների հասցէները: Եթէ ուզում էք ինձ լաւ ծառայութիւն մատուցած լինել, յայտարարեցէք իմ անունից լրագրում. Թող նախկին պատգամաւորները որքան կարելի է շուտով հաղորդեն ինձ իրանց հասցէները: Իսկ նրանց սեփական ներկայութիւնը հնարաւորութիւն կը տայ ինձ այդ գործը աւարտելու 3 շաբաթվայ ընթացքում: Կարող եմ օրինակ բերել այդ առիթով նախկին պատգամաւոր Նաբոկովին, որից ես ստացել եմ հետեւեալ հեռագիրը. «Տեղեկութիւն ստանալով, որ մենք պատասխանատուութեան ենք ենթարկվել, հարկաւոր եմ համարում յայտնել ձերդ գերազանցութեանը, որ ես օգոստոսի վերջերում կը լինեմ Պետերբուրգում»: Հեռագիրը ստացել եմ Բրիւսսելից: Դա միակ պատգամաւորն է որ հաղորդել է իր ուր լինելը: Եթէ այդպէս վարվէին միւս այդ գործի համար մեղադրվողները նոյնպէս գործը կարող էր բաւականաչափ շուտով վերջանալ:

—

ԱԽԱԼՔԱԼԱՔ, սեպտեմբերի 1-ին: Այսօր ուղարկվեց Կաթողիկոսին 200 ծխականների ստորագրութեամբ հետևեալ հեռագիրը. «Խորապէս վրդովված ենք թեթևամիտ կուսակցութեան անհեռատես վարմունքից, որը յանդգնեց կործանել հայկական եկեղեցու դարաւոր ժողովրդական հիմունքները: Յայտնում ենք մեր զայրոյթը նրան: Խնդրում ենք, պահանջում ենք ցրել եկեղեցու և ժողովրդի կոյր թշնամիներին և հրաւիրել իսկական ներկայացուցիչներին: Յանձին 200 ծխականների՝ Մաղաքեանց, Առուտեան, Թադէոս Կարապետեան, Տիգրան Դարբինեան»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

1 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Բարձրագոյն հաստատված ժանտախտի դէմ կռուելու մասնաժողովը մշակել է նոր կանոններ տեղական սանիտարական կոմիտէներ կազմակերպելու մասին: Վերջիններիս կը նախագահէ զեմստվային վարչութեան նախագահը կամ քաղաքագլուխը, կազմի մէջ կը մտնեն բոլոր բժիշկները, որոնք գտնվում են հասարակական և պետական ծառայութիւնների մէջ: Նահանգապետին թոյլ է տրվում միջամտելու միայն այն ժամանակ, եթէ կոմիտէի կարգադրութիւնը հակասում է օրէնքին կամ միջազգային կոնֆերենցիային:

ՌԻԳԱ, 31 օգոստոսի: Առաւօտեան գործադրվեց դաշտային դատարանի վճռած մահվան պատիժը երկու կողոպտիչների վերաբերմամբ, որոնք բռնվելու ժամանակ ցոյց տուեցին զինված դիմադրութիւն:

ՍԱՄԱՐԱ, 31 օգոստոսի: (Պաշտօնական): Նովօուզենսկի գաւառի, Նովօրէպնոմ գիւղում միտինգ տեղի ունեցաւ: Ոստիկանութիւնը պահանջեց ցրվել, ամբոխը պատասխանեց քարեր նետելով: Նախազգուշացումից յետոյ պահակները կրակեցին. ամբոխից սպանված է մէկը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 օգոստոսի: Չինական կառավարութիւնը յայտնեց Պեկինի ռուսական դեսպանին, որ Անդուն և Դանդունգօու նաւահանգիստները ու Մանջուրիայի Պեկին, Թունցզիանցզի և Պակումին քաղաքները բաց են օտարազգի առևտուրի համար:—Արտակարգ պահպանութեան հիման վրա դադարեցրած է «Міръ Божій» ամսագիրը.

ԿԻԵՎ, 31 օգոստոսի: «Бѣлои Церкви»-ում բանկի կողոպտման մասնակիցներից բռնված երկու հոգին Սմոլենսկին և Պաշկովսկին դաշտային դատարանը դատապարտեց մահվան պատժի գնդակահարութեան միջոցով: Նրանք խոստովանեցին քաղաքապահի սպանութեան մէջ: Վճիռը ներկայացված է բերդապահ զօրքի հրամանատարի հաստատութեան:

ՄՈՍԿՎԱ, 31 օգոստոսի: Այսօր Մոսկվայի նահանգական բանտում բացվեցին զինւորական դաշտային դատարանի նիստերը: Դատի են ենթարկված նախկին ուսանող Վլադիմիր Մազուրինը և նրա հետ միասին բռնված Պաւել Անդրեևը, որոնք Ակվարիում թատրոնի մօտ բռնվելու ժամանակ ցոյց տուեցին զինված դիմադրութիւն: Մազուրին կասկածվում է՝ կազմակերպող մի շարք գրաւող արքունական գոյքերի փոխադարձ վարկի ընկերութեան կողոպտման մէջ, պահնորդութեան բաժնի գործակալների մահվան պատժի գործածութեան մէջ և գաղտնի բաժանմունքի նախկին պետ Բոյլօշնիկովի սպանութեան մէջ: Դատարանը Մազուրինին մահվան դատապարտեց կախաղանի միջոցով, Անդրեևին 3 ամիս բանտարկութեան.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 օգոստոսի: Հրէաների պետական հիմնարկութիւնները մտնելու գոյութիւն ունեցող սահմանափակումների կանոնների առիթով հաստատված է մինիստրների խորհրդի որոշումը թոյլատրելու հրէաներին ընդհանուր հիմունքների վրա բանալու մասնաւոր միջնակարգ և տարրական կրթական հաստատութիւններ, ինչպէս հանրակրթական, այնպէս պրոֆեսիոնալականները, ենթարկելով նրանց ընդհանուր կանոնների հսկողութեան: Պետերբուրգում կազմված նոր ժողովրդական կուսակցութիւնը իր ագիտացիական գործունէութեանը մեծ ծաւալ է տալիս:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 օգոստոսի: Պետերբուրգի զինւորական-շրջանային դատարանի վճիռը Կօնօպլեաննիկովի գործի առիթով՝ վճռի որոշումից 48 ժամ յետոյ՝ հաստատվել է Պետերբուրգ զինւորական շրջանային գլխաւոր հրամանատարի օգնականի կողմից օգոստոսի 28-ի երեկոյեան ժամը 4-ին: Վճիռը գործադրվել է օգոստոսի լոյս 29-ի գիշերը:

ԲԱԽՉԻՍԱՐԱՅ, 31 օգոստոսի: Մահմեդականները ինքնադատաստանօրէն սպանեցին յայտնի աւազակ Վէլիշէ Չինալի օղլուն:

Կ. ՊՈԼԻՍ, 31 օգոստոսի: Բ. Դուռը իր ներկայացուցիչներին տուած մի հրամանով նախապատրաստում է պետութիւններին իր ձեռնարկած պատերազմական միջոցներին, որոնք գործադրվել են Բուլղարիայի հետ պատերազմ ծագելու դէպքում, և իր զգուշութիւնները բացատրում է Բուլղարիայի ձեռնարկած միջոցներով:

1 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 օգոստոսի: Արտակարգ պահպանութեան հիման վրա «Переломъ» լրագիրը դադարեցրած է,

ԲԵԼԳՐԱԴ, 31 օգոստոսի: Ժամանեց ռուսաց նոր դեսպան Սերգէեվը: Հաւատարմաթղթերը այս օրերս կը յանձնվի:

ՄՈՍԿՎԱ, 24 օգոստոսի: Կալանաւորված են փող կորզող խմբի 8 անդամները: Բոլորը բռնված են զէնքերը ձեռքերին: Գտնված է գաղտնի տպարան: Իշխան Զերպանովը, որը գլխաւոր ներկայացուցիչն է Մոսկվայի, ռուս մարդկանց դաշնակցութեան», սեպտեմբերի վերջերում կազմակերպում է Կիևում ռուս մարդկանց դաշնակցութեան համակայսերական համագումար:

Կ. ՊՈԼԻՍ, 31 օգոստոսի: Այսօր վերադարձաւ ռուսաց դեսպան Զինովիեվը:

ՊՈԼՏԱՎԱ, 31 օգոստոսի: Նահանգում երևացել են մի քանի անձինք, որոնք իրանց անուանում են անիշխանական-կոմունիստներ և զանազան միջոցներով փողեր են կորզում: Նամակներ են ուղարկում և պահանջում են մահվան սպառնալիքով, որոշ տեղերում փողեր դնել: Լուբնայում խալաֆիկը այդպիսի մի նամակ է ստացել:

ՄԻՏԱՎԱ, 31 օգոստոսի: Գեներալ-նահանգապետը իր մօտ կանչեց ոստիկանական ժանդարմների աւագներին աւազակութիւնների դէմ կռուելու միջոցների մասին խորհելու և այդ նպատակի համար գործադրել զինւորական-դաշտային դատարանի նոր օրէնքը:

ՎԻԵՆՆԱ, 31 օգոստոսի: Սերբիական Ֆինանսատունը աւստրիական կառավարութեանն է յանձնել մի գրութիւն, որով առաջարկում է Աւստրո-վենգրական արդիւնաբերական ֆիրմաների հետ առևտրական պայմանագրեր կապել: Ապահովված է 26 միլիոն րուբլու պատուէր, բայց թնդանօթների պատուէրները մնում են Կրուպպի և Շնէյդերի գործարանների ձեռքին: Առաջարկութիւնը հազիւ այդ պայմաններով ընդունվի: Բանակցութիւնները սկսելուն պէս երևի Պաշիչի հրաժարականը կը լինի:

ԲՐԱՈՒՆՇՎԷՅԳ, 31 օգոստոսի: Վախճանվեց պրուսական Ալբրեխտ պրինցը:

ԹԷՀՐԱՆ, 31 օգոստոսի: Շահը ընտրութիւնների մասին ստորագրեց մասնաժողովի մշակած օրէնքը այնուամենայնիւ. բրիտանական դեսպանատունը ապաստանած փախստականները դուրս չեն գալիս և պահանջում են Աթաբէգի և պալատական կուսակցութեան յայտնի անդամների հեռացումը Պարսկաստանից: Թէհրանում կատարեալ հանգստութիւն է տիրում:

Շուկան բաց է: Ծայրահեղ կուսակցութիւնների պահանջները արտաքսելու նախկին մինիստրներին՝ բոլորը գտնում են չափազանց:

ԼՕՆԴՕՆ, 31 օգոստոսի: Զօրքին տրված մի հրամանով հաստատված է գեներալ-շտաբ: Առանձին գնդերի հրամանատարներին շտաբի անդամները պարտաւոր են աջակցել օֆիցերների և զինւորների վարժութիւնների ժամանակ: Զինւորական մինիստրը իր բացատրիչ գրութեան մէջ մատնացոյց է անում, որ շտաբի պարտականութիւնը կայանում է նրանում, որ զինւորական գործը ներկայ պահանջների բարձրութեան վրա պահվի:

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 31 օգոստոսի: Ծովային դեպարտամենտը ստացաւ մի հարցապնդում նաւաստիների քանակի մասին, որոնք կարող են գրվել կառավարութեան տրամադրութեան տակ Կուբայում ապագայում տեղի ունեցող բարդութիւնների առիթով: Ռուզվէլտը հաւանական է գտնում խառնվելու Կուբայի գործերին: Մի կրէյսեր ուղարկված է Հավանա, մի քանի կրէյսերներ, Կուբայի զանազան մասերը:

Պետական քարտուղար Բէկօն յայտնեց, որ ծովային ցոյցի հարցը Կուբինեան ջրերում դեռ վճռված չէ, բայց ապստամբութիւնը ստացաւ այնպիսի չափեր, որ կառավարութիւնը պարտք է համարում միջոցներ ձեռք առնել ամերիկական շահերի պաշտպանութեան համար:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ
ԱՐԻՒՆԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ
Դրամատիկական անցք մի գործող.
Հեղ. Պ. Հ. Լուազոնի
Թարգմ. ֆր. Տ. Զաւէն
Դիմել՝ «Գուտտենբերգ» գրավաճառանոցին: 1—5

Նիկողայոս Տէր-Ղևոնդեանի
աշխատութիւնները եւ հրատարակութիւնները
նոր տպագրութեամբ.

«Կենչէլի»՝ բանաւոր և գրաւոր հաշւելու խնդիրների, երկրորդ գիրք, երրորդ տարվայ ուսուցման նիւթը, տպագրված խոշոր տառերով, ընտիր թղթի վրա, գինը . . . . . 50 կ.
«Կենչէլի»՝ բանաւոր և գրաւոր հաշւելու խնդիրներ, առաջին և երկրորդ տարվայ ուսման նիւթը, գինը . . 35 կ.
«Մայրենի լեզու», չորրորդ տարի, նոր տպագրութիւն, լրացրած քերականական և ուղղագրական վարժութիւններով և բազմաթիւ նոր յօդուածներով ձոխացրած, 12 տպ. գինը . . 55 կ.
«Մայրենի լեզու», երրորդ տարի, 15 տպ. գինը . . . . . 50 կ.
«Մայրենի լեզու», երկրորդ տարի, 21 տպ. գինը . . . . . 40 կ.
«Մայրենի լեզու», առաջին տարի, 32 տպ. գինը . . . . . 25 կ.

Պահեստը կենտրոնական գրավաճառանոցում:
Նիկողայոս Տէր-Ղևոնդեանի ժամանակաւոր հասցէն՝ Тифлисъ, Гостинница «Викторія». Николаю Теръ-Гевондяну.
(օր ու մէջ) 1—5

Զանգեզուրի գաւառի Լոր գիւղացի
ԳԱԲՐԻԷԼ ԽԱՉԱՏՐԵԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆՑԸ
մեր խանութից գողացել է փող և ապրանք մօտ 150 րուբլու, որի հետ և ստանալիքների փաստաթղթեր. Ներկայացնելիս խնդրում ենք չը վճարել նրան: Բարեկամներին և ծանօթներին խնդրում ենք համոզել յիշեալ պարոնին գոնէ յետ դարձնել փաստաթղթերը:
Баку, Бюро газетъ, О. Газанчяну.
(շ. կ.) 1—2

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գոլովինսկի պրօսպեկտի և Կաղեսակյա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կաղեսակի փողոցից № 2.
(ա. օ.) 222—300

ՁՈՒԹԱԿԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
Մ. Տ. ՎԱՍԻԼԵՎԻ
Պարապմունքների սկիզբն է սեպտեմբերի 1-ին և վերջը յունիսի 1-ին
Ուսման տարվայ վճարն է 90 րուբլի 2 կիսամեակներով
Ընդունելութիւնը օգոստոսի 29-ին, ամենայն օր, ցերեկվայ 10—1 ժամը և երեկոյեան 5—7½ ժամը: Грибоедовская, 5
(ա. օ.) 4—10

ՅՈՎՍԷՓ ՄԵԼԻՔ-ՋՀԱՆԵԱՆՑԻ
ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՈՆՈՒՄ
Ընդունվում են աշակերտներ՝ գիշերօթիկ և երթևեկ, որոնք պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար: Աւանդվում են հետևեալ լեզուները՝ ռուսերէն, հայերէն, գերմաներէն, ֆրանսերէն և լատիներէն:
Тифлисъ, Гановская ул. № 7.
(սեպ. 1, 3 և 5) 8—10

Կովկասի ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուի թոյլտուութեամբ բացված են
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶՆԵՐԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ
մայրերի եւ դաստիարակչուհիների համար
Թիֆլիս, Միքայէլեան փողոց № 138.
Դասընթացը միամեայ է: Ուսուցանելու առարկաներն են. մարդակազմութիւն, հիմունքներ բնախօսութեան և մանուկ հասակի առողջապահութեան առաջին օգնութիւն տալը, առօրեայ քիմիա, կենդանաբանութիւն և բուսաբանութիւն, մանուկ հասակի հոգեբանութիւն, մանկական գրականութիւն, մանկական պարտէզների տեսութիւն և գործնական զբաղմունքներ: Դասընթացներին կից կան և վրաց լեզուով բաժանմունքներ: Տարեկան վարձն է 50 րուբլի որը կիսամեակներով է վճարվում: Ունկնդիրների ընդունելութիւնն է սեպտեմբերի 15-ից: Դասընթացների հիմնադիր Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկ:
(2, 12, 20, 30) 5—5

Մի երիտասարդ աւարտել է Գանձակի քաղաքային ուսումնարանի դասընթացը և փափագում է ուսումը շարունակել, բայց միջոցները չեն ներում. խնդրում է բարերարներից կամ որևէ պաշտօն տալ, կամ նիւթականով օգնել: Հասցէն՝ Гудовича ул. № 10 д. Джабарова Хачатуру Лалаянцу. Для передачи Араму Теръ-Саакянцъ.
(հ. շ. կ.) 2—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Համաձայն «Բօզարջեանց և Որդիք» Առևտրական Տան առաջարկութեան՝ սրանով յայտնում եմ Թիֆլիսի մանրավաճառներին, որ յիշեալ Տան գործարանի ծխախոտները վաճառվում են նաև ինձ մօտ, համաձայն թերթերում («Զանգ» և «Т.Листокъ») յայտարարված գների և յայտարարած օրից, այն է՝
Պապիրոսը I տես. 5 ր.—4 ր. 30 կ.
» II » 3 ր.—2 ր. 60 կ.
Ծխախոտը II » 1 ր. 44 կ.—1 ր. 25 կ.:
Հասցէն՝ Головинскій просп., № 23, տուն Օրբէլեանի, խանութ Գրիգոր Ֆարահեան:
(ու. շ. կ.) 2—3

ԹԱՒՐԻԶԻ
Արամեան և ս. Աննայեան երկսեռ ուսումնարանների համար
ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ
երկու ուսուցիչներ ռուսաց լեզուի և այլ առարկաների համար և մի ձեռագործի վարժուհի: Պայմանների համար հարցնել «Մշակ»-ի խմբագրատանը պ. Խանազադեանին: Ժամը 12—1-ը:
(հ. ու. շ. կ.) 3—4

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը: Երևանեան հրապարակ, տ. Գուրգէնովի № 7. պօդեզ նոտար Մղեբրովի: (ե.հ.շ.) 48—100

ՀՐԱՒԷՐ
Նորին Վեհափառութեան կարգադրութեան համաձայն Կուկիայի Նորաշէն Ս. Աստուածածին եկեղեցու ծխականները երկու սեռից և 2-րդ անգամ հրաւիրվում են սեպտեմբերի 3-ին ցերեկվայ ժամը 12-ին որոշելու յիշեալ եկեղեցու գանձում գտնված ծխական դպրոցի խնամակալ Ն. Գրիգորեանի իրաւասութեան սահմանները:
Աւագ-երէց՝ Ալէքսանդր քահանայ Տէր-Յովհաննիսեանց
(հ. շ. կ.) 2—3

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի հոգաբարձութիւնը սրանով յայտնում է ի գիտութիւն՝ որ նորաբաց VII մանկավարժական դասարանում աւանդվելու են հետևեալ առարկաները. 1) մանկավարժութիւն, 2) փորձնական դասեր ու գործնական պարապմունքներ, 3) հոգեբանութիւն, 4) փիլիսոփայութեան պատմութիւն, 5) սօցիօլօգիա, 6) քաղաքատնտեսութիւն, 7) ընդհանուր գրականութիւն և 8) գեղարուեստ.
(օգ. 18, 22, 26, 30) 4—4

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ.պ. անդամների և կանդիդատների, որ, ի նկատի առնելով որ բոլոր միջնակարգ դպրոցներում սկսվում են պարապմունքները և վերաքննութիւնները, երկուշաբթի օրվանից, այսինքն օգոստոսի 28-ից երկու սեռի աշակերտներին, նաև երեխաներին ժողովարանի ամառային շինութեան մէջ մուտքը արգելված է:
29, 31, 2 2—3

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
դասարանական սեղաններ, դպրոցական կա կարասիներ, դասական պիտոյքներ, շորերի ըն կուղեայ պահարան, մարմարեայ լուացարան, սեղաններ, հայելիներ և ուրիշ իրեղէններ: Օլգինսկայա փողոց, № 14. հարցնել դռնապանին: ե. հ. շ. 6—6

Կար ու ձևի և ձեռագործի ուսումնարան
„ԱՇԽԱՏԱՆՔ“
Աշակերտուհիների ընդունելութիւնը շարունակվում է օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 20-ը, ժամը 11—2-ը:
Աւանդվում են՝ ռուսերէն և թուաբանութիւն (անգրագէտների համար): Կար ու ձևի ամբողջ դասընթացքի վճարը ըստ կարողութեան: Պատուէրներ՝ տիկնանց զգեստներ, վերնազգեստներ և սպիտակեղէններ:
Հասցէն՝ Բեբուտովսկի փողոց № 17, գիմնազիայի դիմաց:
(ե. հ. շ.) 4—

Մի գիմնազիաւարտ երիտասարդ ցանկանում ճաշի և սենեակի փոխարէն ընտանիքում դասեր ունենալ: Հասցէն՝ ронская ул. д. Мартиросянца кв. Мел Бахтамянца. հարցնել 12—2 ժամը ցերեկվայ և 5—7 երեկոյեան:
(հ. շ.) 2—

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով):

	Փօստային	Մարդատար.	Արագ.	Ա
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 18 ր.
Ալէքսանդրապոլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր.
Ալէքսանդրապոլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր.
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր.

Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեան տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ., տուն № 24/4.)
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն: Դասընթացը աւարտողներին տրվում են ատեստատներ: Առարկաներն են. 1) առևտրական տնտեսութիւն (քաղաքական տնտեսութիւն). 2) հաշուապահութիւն (պարզ, իտալական, բանկային և գործարանային). 3) առևտրական թուաբանութիւն. 4) կանոնադրութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) առևտրական թղթակցութիւն. 6) թուաբանութիւն համրիչի վրա. 7) վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղել): Առարկաները ուսուցանվում են Վիէննայի առևտրական ակադեմիայի ծրագրով: Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.: Կուրսերին կից բացվում են
ԿՈՒՐՍԵՐ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ
(Գերմաներէն, Ֆրանսերէն եւ Անգլիերէն)
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 1-ից ամենայն օր երեկոյեան 4—7 ժամը: Ծրագիրը և կանոնները ուղարկվում են և տրվում են ձրիապէս կուրսերի հիմնողի բնակարանում
Առևտրական գիտութիւնների կանդիդատ Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱ
(ե. շ.) 2—10

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Երկու սեռի անձանց համար
(Баку, уголъ Красноводск. и Меркурьевск. д. Набатовыхъ)
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական եւ առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատ.
Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա:
Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայնօր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը:
Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) տրվում և ուղարկվում են ձրիաբար: Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову.
(ե. շ.) 15—30

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5